

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### Յստակ է. Իշխանափոխության ճանրային Պահանջ Չկայ

Հայաստանի խորհրդարանական ընդդիմութեան նախաձեռնած փողոցային պայքարը՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականի պահանջով, մօտ օրէն պիտի բոլորէ իր առաջին ամիսը: Այս ընթացքին գործադրութեան դրուած բոլոր միջոցները՝ հանրահաւաքները, ելոյթները, երթերը, անհնազանդութեան գործողութիւնները, հրապարակային քննարկումները, գումարած ծանօթ երգիչներու մասնակցութեամբ համերգները չկարողացան համոզելու լայն հասարակութեան՝ գալու եւ միանալու շարժումին, որու շարքերը առաջին օրէն իսկ, չստանալով մեծ տարողութիւն, այժմ օր-օր կը նօսրանայ ու հրապարակներու վրայ մնացած են միայն կուսակցականներ, նախկին պաշտօնեաներ ու իրենց ապօրէն ունեցուածքը պաշտպանելու մտահոգութեամբ գործարարներ: Հրապարակի վրայ կը բացակայի պարզ ժողովուրդը, որ պիտի հանդիսանար որեւէ նման շարժումի գլխաւոր ու միակ յենարանը, որու բացակայութեամբ կարելի չէ հասնիլ յաջողութեան, որքան որ ալ ընդդիմադիր դեկավարները խօսին մօտալուտ յաղթանակի մասին ու փորձեն ոգեւորել իրենց փոքրաթիւ հետևորդները:

Այս ակնյայտ ծախողումին պատասխանատուները անոնք են, որոնք փողոց դուրս եկան առանց առաջնորդող դեկավարի ու յստակ ծրագիրներու: Եարժուքը սկսաւ կրկնօրինակելով Թաւշեայ Յեղափոխութեան քայլերը, սակայն առանց ունենալու անոր ենթահողը: 2018-ի շարժումը տարիներու վրայ կուտակուած դժգոհութիւններու՝ անարդարութեան, մեծատիրութեան, կաշառակերութեան, ազատութիւններու կաշկանդման եւ բազում այլ երեւոյթներու դէմ ըմբոստութեան արտայայտութիւնն էր: Ներկայիս իրավիճակը ամբողջութեամբ տարբեր է եւ հասարակութիւնը ունի բոլոր ազատութիւնները իր խօսքը լսելի դարձնելու, իրաւունքները պաշտպանելու ու տեսակետները տեղ հասցնելու համար:

«Արցախի փրկութեան» լօգունգով հրապարակ իջած ընդդիմադիրները բաւական ուշ անդրադարձան նաեւ որ, այդ կարգախօսը համոզիչ չէ ժողովուրդի մեծամասնութեան համար ու միայն վերջերս անոնք սկսան խօսիլ թաւանը ետ բերելու եւ կամ օլիկարխ-

### «Այդ Ձեւքը Օգտագործուեցաւ Հայաստանի Եւ Հայ Ժողովուրդին Դէմ». Փաշինեանը՝ ՀԱՊԿ Անդամ Երկիրներու Ղեկավարներուն

Մայիս 16-ին Մոսկուայի մէջ գումարուած Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ գագաթաժողովին ընթացքին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը իր ելոյթին մէջ անդրադարձաւ Կազմակերպութեան աշխատանքին քննադատելով անոր կեցուածքը՝ Հայաստանի հանդէպ: «Նախորդ տարի, ճիշդ այս օրերին, Ատրպէյճանի զինուած ուժերը ներխուժեցին Հայաստանի ինքնիշխան տարածք, եւ Հայաստանը դիմեց ՀԱՊԿ-ին, որպէզլի գործարկուէին մեխանիզմները, որոնք նախատեսուած են ՀԱՊԿ խորհրդի կողմից հաստատուած փաստաթղթով: Բայց, ցաւօք, մենք չենք կարող ստանալ, որ Կազմակերպութիւնն արձագանգեց այնպէս, ինչպէս սպասուած էր Հայաստանը», ըսաւ ան:

Փաշինեան նշեց, որ հայկական կողմը երկար ժամանակ նաեւ բարձրացուցած է Կազմակերպութեան անդամ երկիրներուն կողմէ Հայաստանի ոչ-բարեկամ երկրին գէնք



Մոսկուայի մէջ գումարուած ՀԱՊԿ գագաթաժողովը

վաճառելու հարցը: «Արդիւնքում՝ այդ գէնքն օգտագործուեց Հայաստանի եւ հայ ժողովրդի դէմ: Եւ դա նոյնպէս խնդիր է: Անկեղծ ասած, 2020 թուականի 44-օրեայ պատերազմի օրերին եւ պատերազմից յետոյ ՀԱՊԿ անդամ երկրներին

արձագանգը այնքան էլ չգոհացրեց Հայաստանի Հանրապետութեանը եւ հայ ժողովրդին: Բայց ես ուզում եմ յատուկ ընդգծել Ռուսաստանի եւ անձամբ ՌԴ նախագահի դերը

### Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Նորընտիր Կաթողիկոս-Պատրիարքին Հովուական Անդրանիկ Այցը Ամերիկա

Հիւսիսային Ամերիկայի Տիրամայր Նարեկի Հայ Կաթողիկէ Թեմը կը հաղորդէ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ նորընտիր Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց՝ Ամենապատիւ եւ Գերբերջանիկ Տէր Ռաֆայէլ Պետրոս ԻԱ.-ի հովուական անդրանիկ այցը Գալիֆորնիա:

Ամենապատիւ Հոգեւոր Տէրը ընտրուած է Կաթողիկոս Պատրիարք՝ Հոռոմի մէջ Հայ Կաթողիկէ Եպիսկոպոսներու Սիւնհոդոսին 2021 թուականի Սեպտեմբեր 23-ին, Գահակալութեան արարողութիւնը տեղի ունեցաւ 24 Հոկտեմբեր 2021-ին Սուրբ Եղիա Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Աթոռանիստ Եկեղեցւոյ մէջ՝ Պէյրութ/Լիբանան:

Ամենապատիւ Հոգեւոր Տէրը իր երկշաբաթեայ յատուկ այցելութիւնը կը մեկնարկէ Գալիֆորնիոյ Հայ Կաթողիկէ Եկեղեցիներու այցելութեամբ՝ «Պատրիարք Կաթողիկոսին իւրաքանչեւ այցելութեան գլխաւոր նպատակն է առաջնահերթել Կաթողիկէ Եկեղեցւոյ ընկերային եւ հոգեւոր առաքելութիւնը, սուրբ Պատարագ մատուցանելով Հարաւային Գալիֆորնիոյ Հայ Կաթողիկէ Եկեղեցիներուն մէջ», ըսաւ Արհիպատիւ Հայր Միքայէլ Եպիսկոպոս Մուրատեան՝ Հիւսիսային Ամերիկայի Տիրամայր Նարեկի Հայ Կաթողիկէ Թեմին Առաջնոր-



Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց՝ Գերբերջանիկ Տէր Ռաֆայէլ Պետրոս ԻԱ

դը: «Մենք մեծ ուրախութեամբ կը սպասենք Ամենապատիւ Հոգեւոր Տէրը այցելութիւնը, ստանալու համար անոր Տէրութեան Հայրական օրհնութիւններն ու ըմբոշիւնելու անոր Հայրական պատգամը»: Այս հովուական այցելութիւնը պիտի սկսի Մայիս 27-ին երեկոյեան ժամը 7:00 Կլենտէյլի Սգ Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Աթոռանիստ Եկեղեցւոյ մէջ

### 10 Միլիոն Տուարի Նոր Յատկացում Հայ-Ամերիկեան Թանգարանին

Նահանգի մայրաքաղաք՝ Սագրամենթոյն ստացուած տեղեկութեանց համաձայն՝ Գալիֆորնիոյ Խորհրդարանի տնտեսական յանձնախումբը, յառաջիկայ տարեշրջանի պիւտձէին համար, որոշած է 10 միլիոն տուարի նոր յատկացում կատարել, Կլենտէյլի մէջ կառուցուող Հայ-Ամերիկեան թանգարանի եւ մշակութային կեդրոնի ֆոնտին: Սոյն բանաձեւի որդեգրումին համար իրենց գործնական աջակցութիւնը ունեցած են խումբ մը ծերակուտականներ, գլխաւորութեամբ ծանօթ հայասէր ծերակուտական Անթօնիօ Փորթանթիոյ: Կը սպասուի որ սոյն առաջարկը իր վերջնական վաւերացումին ենթարկուի եւ ստորագրուի Գալիֆորնիոյ դեմոկրատ կառավարիչ Կէվին Նիուսուսի կողմէ:

Հայ-Ամերիկեան թանգարանի հոգաբարձուներու Խորհուրդի գործադիր տնօրէն՝ Շանթ Սահակեանի համաձայն վերոյիշեալ յատկացումով՝ Գալիֆորնիոյ պատկան մարմիններու կողմէ թանգարանին ցարդ յատկացուած գումարը կը հասնի 19 միլիոն տուարի: Կատարուած նախատեսութիւններու հիման վրայ Հայ-Ամերիկեան թանգարանի շինութիւնն իր աւարտին պիտի հասնի 2024 թուականին:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

«Դիմադրութիւն» Շարժումը Վերածուել է Ընդդիմութեան Առաջնորդութիւնը Ստանձնելու Անողոր Պայքարի

ՅԵՂԻՍԵ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ընդդիմութեան նախաձեռնած դիմադրութեան շարժումը յայտնուել է անդեմութեան կամ աւելի ճիշտ՝ երկդիմութեան փաստի առաջ, թէև շարժման դէմքերից մէկը՝ Իշխան Սողաթէլեանը, իրավիճակն այլ կերպ է ախտորոշում՝ գործածելով երկդիմութեան տերմինը:

Երկդիմութեան ասելով դաշնակցական գործիչը ենթադրաբար նկատի ունի այն, որ կայ դէ իւրէ իշխանութիւն՝ ի դէմս Նիկոլ Փաշինեանի, նրա գլխաւորած կառավարութեան ու ԱԺ մեծամասնութեան, եւ դէ ֆակտո իշխանութիւն՝ ի դէմս փողոցային անդէմ եւ գնալով նստակցող շարքերով դիմադրութեան շարժման: Սողաթէլեանի տրամաբանութեամբ առաջնորդուելու դէպքում մեր երկրում 1000-ից աւելի (վերջին մի քանի օրերի տուեալներով՝ 1200 մարդ է մասնակցում հաւաքներին) թուով աշխատակիցներ ունեցող ցանկացած հիմնարկ կարող է մի օր թարս ոտքից արթնանալ, իրեն համարել երկրի այլընտրանքային իշխանութիւն եւ պահանջել դէ իւրէ իշխանութեան հրաժարականը:

Վերադառնանք երկդիմութեան խնդրին. այս օրերին յաճախ է հնչում շատ կարեւոր մի հարց՝ ով է արդէն երրորդ շարժումը շարունակուող տարերային

այս շարժման գլուխը՝ Սերժ Սարգսեանը, թէ՞ Ռոբերտ Քոչարեանը՝ իր քաղաքական յենարանի շՅԻ-ով: Ակնյայտ է, որ իրենց հանրային ցածր վարկանիշը հաշուի առնելով՝ նախկին երկու նախագահները (երեւի բարձր վճարուող քաղտեխնոլոգների խորհրդով) որոշել են քաղաքական պայքարի սուբեկտ դառնալ ոչ թէ իրենց սեփական դէմքով, այլ արենա նետելով իրենց «գլադիատորներին», որոնցից մէկը Իշխան Սողաթէլեանն է, միւսը՝ Արթուր Վանեցեանը: Պատահական չէ, որ մրցակից երկու սուբեկտներն էլ փորձեցին իրենց քաղաքական մենամարտից առաջ ստանալ Հիւսիսի օրհնութիւնը՝ մէկը անձամբ Մոսկովա այցելելով, միւսն էլ գործուղելով Արմէն Ռուստամեանին: Հիւսիսի հաւանական պատասխանը կարող է լինել այսպիսին՝ «փորձէք բզբզալ, ա տամ դալչէ բուղետ վիդնօ»: Պարտնայք ընդդիմադիրներն առայժմ բզբզում են, սակայն առանց շօշափելի արդիւնքի ու հեռանկարի:

Երկրորդ եւ երրորդ նախագահների միջեւ առկայ հակասութիւնները, ի դէպ, նոր չեն, որ առկայ են, եւ միայն 44-օրեայ պատերազմից յետոյ ստեղծուած իրավիճակի թելադրանքով չէ, որ ի յայտ են եկել: Ակնյայտ է, որ Սերժ Սարգսեանը խախտել է

իշխանութեան փոխանցման կարգը, այն իշխանութեան, որը վերցուել էր 1998-ին, երկուսի՝ իր եւ Քոչարեանի միջեւ էր կիսուել 1999 Հոկտեմբերի 27-ի միջոցով, փոխանցուել էր 2008-ի Մարտի 1-ի գնով եւ անվերադարձ գիջուկեց 2018-ի յեղափոխութեան հետեւանքով: Եւ որքան էլ Սերժ Սարգսեանը փորձի արդարանալ, թէ 2018-ին ինքն իշխանութիւնը փոխանցել է ոչ թէ «սրանց»՝ Ժողովրդին՝ ի դէմս Փաշինեանի, այլ առաջին փոխվարչապետ Կարէն Կարապետեանին, մէկ է՝ նախատել է կլանի ներքին կանոնակարգը, «կոտորուել» է, հետեւապէս այլեւ լեզվաբար իրաւունք չունի պայքարելու իր կողմից բաց թողնուած «Զինը» շիշ վերադարձնելու համար: Ուստի պէտք է ազատի Քոչարեանի ոտատակը եւ գործին չխանգարելու համար փորձի «դրազ կանգնել»:

Երբեմնի սիւսական երկուորեակների մրցակցութեան խօսուել եւ վառ ապացոյցն այն է, որ թէև վերջիններս 2021 թուականի արտահերթ ընտրութիւնների միջոցով իրենց իշխանական հակնութիւնները բաւարարելու բացառիկ հնարաւորութիւն էին ստացել, սակայն չկարողացան չաղթապարել իշխանական ամբիցիւսներն ու հանդէս չեկան միասնական դաշինքով: Այդ՝ խորհրդարանական աշխատանքի

ընթացքում խլացուած հակասութիւնն ու մրցակցութիւնն այժմ էլ փողոցային շարժման մակարդակում է տեղի ունենում, ինչի մասին, ի դէպ, մերթնդմերթ գրում է ընդդիմադիր մամուլը՝ չհաշուած երկու լիտերների ֆէյսպուքեան քարոզիչների՝ միմիւսանց ուղղուած թունաւոր խայթոցները: Հարկ է նշել, որ այսպէս կոչուած՝ դիմադրութեան շարժման ակցիաների այս ողջ ընթացքում Սերժ Սարգսեանն ու Ռոբերտ Քոչարեանը կողք կողքի, ուր մնաց թէ թեւանցուկ, չեն քայլել՝ այսպիսի ընդգծելով իրենց լայն համախոհութիւնն եւ ամենակարեւորը՝ շարժման ապանձնաւորուած լինելը, միասնական յայտարարութեամբ հանդէս չեն եկել շարժման ընթացիկ իրավիճակի գնահատականով, անգամ «իդեա ֆիքսի»՝ Արցախի փրկութեան վերաբերեալ մէկ միասնական բանաձեւ չեն առաջարկել՝ մատնելով ներքին մրցակցութեան այսընթացիկ իրավիճակը: Այս երկուսից մէկը վագում է, միւսը փորձում է ամէն կերպ վագանցել նրան կամ գոնէ հաւասարուել մրցակցին: (Մէկը իր աջակիցների հետ խարոյկի շուրջը քաղաքական զրիցներ է անում, միւսը փորձում է քաղաքագիտական դասախօսութիւններ կարգաւ հրապարակում հաւաքուած ընդդի-

Օբիեկտիւ Իրողութիւնից Սուբիեկտիւ Քայքայման Տանող Ներքաղաքական Պայքարը

ՅԱԿՈՒ ԲԱԴԱԼԵԱՆ

Կեդրոնական պանքի փոխնախագահը խորհրդարանում յայտարարել է, որ պանքը 2022 թուականի համար կանխատեսում է 6,5 տոկոս գնաճ եւ 1,5 տոկոս տնտեսական աճ, պայմանաւորուած արտաքին միջավայրով: Արտաքին միջավայրը Հայաստանի համար մեղմ ասած նպաստաւոր չէ եւ ցաւալին այն է, որ չկան դրա փոփոխութեան յուսադրող միտումներ: Աւելին, ներկայիս համաշխարհային իրողութիւններն այնպիսին են, որ արտաքին տնտեսական միջավայրի մարտահրաւէրներն ունեն ուժեղացման միտում:

Բանն այն է, որ դիտարկուած է ընդհուպ պարենային սուր ճգնաժամ ամբողջ աշխարհի մակարդակով: Մեծ հաշուով, տնտեսական դաշտում այսօր տեղի է ունենում այն, ինչ արդէն տարիներ շարունակ կատարւում է ռազմա-քաղաքական դաշտում՝ համաշխարհային կարգի փլուզում, ապամոնտաժում, տարերային զարգացումներ, լայնատարած անկայունութիւն: Ութրանիական պատերազմը այդ զարգացումները արագօրէն տեղափոխեց տնտեսական դաշտ եւ նոյնը ներկայումս կատարւում է համաշխարհային տնտեսա-քաղաքական մասշտաբում: Փոխուել է համաշխարհային տնտեսութիւնը, այդ կերպ ասուելի մարտահրաւէրներն բերելով գործնականում բոլոր տնտեսութիւնների համար, այդ թւում եւ առաջատար երկրներին, ինչպի-

սին օրինակ նաեւ ԱՄՆ-ն է, որտեղ գնաճային ցուցանիշները աննախադէպ են: Աւելին, ԱՄՆ-ն ու Եւրոպան ներկայումս կանգնած են լուրջ խնդրի լուծման որոնումների առաջ՝ ինչպէս Ուրբանիայից դուրս բերել աւելի քան 20 միլիոն տոննա հացահատիկը, այդ կերպ կանխելով համաշխարհային պարենային ճգնաժամը կամ գնաճային ահաւելի ճնշումը: Այդ ֆոնին, ի դէպ, տեղեկութիւն տարածուեց, որ Հնդկաստանը արգելք է սահմանել ցորենի արտահանման վրայ: Իսկ Դելիի ցորենի խոշորագոյն արտահանողներից է աշխարհում: Իրավիճակը պատկերացնելու համար նկատենք, որ երկու խոշոր արտահանողներին՝ Ուրբանիայի եւ Ռուսաստանի առումով այսօր գործնականում փակուղի է: Եւ դա ընդամէնը մի հատուածն է այն մեծ վերափոխումների, որոնք այսօր ծաւալուած են համաշխարհային տնտեսութեան համակարգում: Այդ իրավիճակում, Հայաստանի համար տնտեսական անվտանգութեան միջոցառումները ստանում են առաւել քան կենսական նշանակութիւն, ինչը իր հերթին հրամայական է դարձնում առաջին հերթին ազգային ներուժի մոպիլիզացիան: Մինչդեռ, այդ ֆոնին հայկական, համահայկական միջավայրում այսօր ծաւալուած է բացարձակ հակառակ տրամաբանութեան մի ալիք, երբ Հայաստանում ներքաղաքական խնդիրներով զբաղուած, ներքաղաքական պայքարի դուրս եկած ուժերը, յատկապէս նրանք, որոնք

մեծ ազդեցութիւն ունեն նաեւ սփրւքում, այդ քաղաքական նկատուածներին ելնելով փորձում են տրոհել այդ ներուժը: Եւ դա այն դէպքում, երբ Հայաստանի գլխաւոր հակառակորդը այս շրջանում կարծես թէ բաւականութեամբ արձանագրում է նաւթի ու գազի գնի եւ պահանջարկի աճն ու դրանից բխող թէ ֆինանսական, թէ քաղաքական դիվիզենտների հեռանկարը, ինչը յաւելեալ անվտանգային սպառնալիք է Հայաստանի համար:

Այդ պարագայում, Հայաստանի ու Արցախի անվտանգութեան վերաբերեալ բարձրագոյն մտահոգութեամբ ներքաղաքական պայքար վարող ուժերը՝ այդ պայքարի գին են դարձնում համահայկական ներուժի մասնատումը ըստ կուսակցական կամ խմբային շահերի: Այն, որ քաղաքական ուժերը պէտք է վարեն ներքաղաքական պայքար, հարկ եղած դէպքում օգտագործելով փողոցն ու հրապարակը՝ բնականաբար սահմանադրական իրաւունքն է ու նաեւ քաղաքականութեան օբիեկտիւ բնոյթը: Բայց, երբ անվտանգութեան անուան տակ վարուող պայքարը սկսում է հարուածել հայկական տնտեսական ներուժին, սա արդէն վերածում է առանց այդ էլ ինքնին որոշակի համախմբման կարիք ունեցող այդ ներուժի առաւել քայքայման, ընդ որում երկարաժամկետ ռիսկով, եւ այդ կերպ նաեւ անվտանգութեան ռիսկերի ու սպառնալիքների ուղիղ աճի:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏԱԹԵՐԹ
ԱՌՅԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԵ ԱՋԱԳԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Բողոքի Գործողութիւնները Որեւէ Կապ Չունին Խաղաղ Ցոյց Հասկացողութեան Հետ. Վահագն Ալեքսանեան

«Ես կարծում եմ՝ պարոն Սաղաթէլեանը պէտք է սկսի արդէն ինչ-որ մի հատոր գրել այն մասին, թէ ինչպէս չանդամալուծուած քաղաքն անուանել անդամալուծուած, ինչպէս չկանգնած երկիրն անուանել կանգնած, ու այդպէս շարունակ: Եթէ Իշխան Սաղաթէլեանն այս կշռոյթներով շարունակի, այն է՝ հերքելով բացարձակ ու ակնյայտ ճշմարտութիւնները՝ ինչ-որ օդից արտայայտութիւններ անի, շուտով նա կը յայտարարի, որ իր հրամանով է, որ արեւը երեկոյեան մայր է մտնում, եւ միայն իր հրամանով է այն առաւօտեան նորից ծագում»:



«ԲՊ» խմբակցութեան պատգամաւոր Վահագն Ալեքսանեանը:

Անոր խօսքով՝ իրականութեան մէջ այս ամէնը շատ ծիծաղելի է, եւ իրեն կը հետաքրքրէ, թէ չ'ամչնա՞ր արդեօք Իշխան Սաղաթէլեանը, երբ ամէն օր կանգնելով նոյն երկու-երեք հազար մարդու առաջ, կը յայտարարէ բաներ, որոնք իրականութիւնն չեն:

Խօսելով այն մասին, որ ընդդիմութիւնը կը յայտարարէ, որ ոստիկանութիւնը իրենց նկատմամբ անհամաչափ ուժ եւ բռնութիւն կը գործադրէ, Վահագն Ալեքսանեան ըսաւ, թէ որքանով հետեւած է այդ գործողութիւններուն, այնտեղ տեսած է խիստ յարձակողական, այլատեսաց ցուցարարներ, որոնք հարուածած են ինքնաշարժներու դուռերուն, որոնք կտորած են ինքնաշարժի մը հայելին, կան տեսարաններ, որ էտուարտ Շարմազանովի գլխաւորած ինչ-որ խումբ մը կը յարձակի հերթական վարորդի վրայ, շիշով կը հարուածէ անոր, տեսած է տեսարաններ, թէ ինչպէս կը յարձակին ճանչցուած ու սիրուած դերասան Սօս Զանիբեկեանի վրայ՝ ընդամէնը փողոցին մէջ քալած ատեն, եւ վերջիվերջոյ տեսած է, թէ ինչպէս

Կիւմրիի մէջ ծեծած են տարիքով տղամարդիկը:

«Ու երբ որ այս պապիկ ծեծողները ու նրանց հովանաւորները խօսում են բռնութիւնից կամ ոստիկանութեան անհամաչափ գործողութիւններից, այստեղ պէտք է հաստատել մի շատ կարեւոր փաստ՝ այն ցոյցերը, գործողութիւնները, բողոքի շարժումները, որոնք իրենք անում են, ոչ մի կապ չունեն խաղաղ ցոյց հասկացողութեան հետ. խաղաղ ցոյցը միջազգային իրաւական եզր է, որն ունի իր յստակ բացատրութիւնը, երբ շարժումի մասնակիցները խաղաղ են, չեն գործադրում բռնութիւն, բռնութեան կոչեր չեն անում, այլատեսացութիւն չեն դրսեւորում, չեն թիրախաւորում այլ քաղաքացիներ: Սա դրա հետ ընդհանրապէս կապ չունի: Ու այսօրուայ տեսարանները ես տեսել եմ, ու ամենաբռնի գործողութիւնը, որ ընկել է իմ աչքով, դա Աննա Մկրտչեանի կողմից ոստիկանին բռնի կերպով գրկելն ու մեքենային սեղմելն է եղել»:

Հայաստանի Սէջ Պիտի Բացուի Մը Shell Ընկերութեան Պենզինի Կայարանները



Հայաստանի մէջ այս տարուայ աշնան բրիտանա-նիտերլանտական Shell ուժանիւթի մեծ ընկերութիւնը պիտի գործարկէ պենզինի կայարաններու ցանց: Այս մասին յայտնեց ՀՀ տնտեսութեան նախարար Վահան Քերոբեանը:

Ըստ նախարարին՝ ընկերութիւնը կը պատրաստուի նոր որակի եւ չափանիշերու պենզինի կայարաններու ցանց բանալու: Ծրագիրը կայ անցեալ տարուան, հայկական կողմը իր հերթին փորձած է ամէն կերպ աջակցիլ, ինչիւնչերու պարագային՝ օգնել:

300 Սփիւռքահայ Մասնագէտներ Դիմած ԵՄ ՀՀ Պետական Համակարգին Մէջ Աշխատելու Համար



Աւարտած է ՀՀ կառավարման համակարգին մէջ սփիւռքահայ մասնագէտներու «Ի գործ» 2022 ծրագրի յայտարարմանը: Ծուրջ 300 սփիւռքահայ մասնագէտներ այս տարի դիմած են ծրագրին 31 երկիրներէ՝ Ռուսիա, ԱՄՆ, Լիբանան, Ուքրանիա, Պելճիբա, Իրան, Գանատա, Ֆրանսա, Գերմանիա, Պելլաուսիա, Արժանթին, Զուլիբերիա, Նորվեգիա, Իտալիա եւ այլն: Առաջին անգամ ծրագրին դիմած են Հոլանտայէն, Յորդանանէն, Պրագիէն, Արաբական Միացեալ Էմիրութիւններէն եւ Նիւ Զելանտայէն: Այս մասին յայտնած են ՀՀ սփիւռքի գործերի գլխաւոր յանձնակատարի գրասենեակէն:

Ծրագիրը կ'իրականացուի ՀՀ սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատարի գրասենեակին կողմէ: Այն հնարաւորութիւն կ'ընձեռէ սփիւռքահայ մասնագէտներուն մէկ տարի աշխատելու Հայաստանի եւ Արցախի աւելի քան 25 գերատեսչութիւններուն մէջ՝ բերելով իրենց փորձը, գիտելիքները, նախաձեռնելով նոր ծրագրեր եւ սկսելով իրենց ասպարէզը հայրենիքի մէջ: Բոլոր դիմորդները ունին պաշալտրեայի աստիճան եւ առնուազն 5 տարուայ մասնագիտական աշխատանքային փորձ կամ մագիստրոսի աստիճան (կամ աւելի բարձր):

Եւ 3 տարուայ մասնագիտական աշխատանքային փորձ:

Ընտրուած մասնագէտները Յուլիս ամսուայ ընթացքին պիտի հրաւիրուին առցանց հարցազրոյցի համապատասխան գերատեսչութիւններու ներկայացուցիչներուն հետ: Վերջնական ընտրութեան յետոյ այս տարուայ Սեպտեմբերէն 50 սփիւռքահայ մասնագէտ պիտի սկսին իրենց աշխատանքը: ՀՀ կառավարութիւնը մասնագէտներուն համար ձեռք կը բերէ օդանաւի տոմս (դէպի Հայաստան եւ հակառակ ուղղութեամբ), կը յատկացնէ կեցութիւն նպաստ՝ ամսական 336.000 դրամ, առողջութեան ապահովագրութիւն եւ մէկ տարուայ կացութեան կարգավիճակի տրամադրման վճարը:

Յիշեցնենք, որ ծրագիրը կ'իրականացուի արդէն 3-րդ անգամ ըլլալով: Նախորդ երկու տարիներուն ծրագրի շրջանակներուն մէջ 100-է աւելի մասնագէտներ սկսած են իրենց աշխատանքը Հայաստանի եւ Արցախի պետական համակարգին մէջ: Անոնց 70 տոկոսը հայրենադարձ ըլլալու որոշում կայացուցած է:

«Ի Գործ»-ը Հայաստանի պատմութեան մէջ միակ պետական ծրագիրն է, որ սփիւռքահայ մասնագէտները կը հրաւիրէ սեփական ներուժով փոխելու Հայաստանի կառավարման համակարգը:

Այս Տարի Հայաստան Կը Կանխատեսէ 6.5% Սղաճ Եւ 1.5% Տնտեսական Աճ

Մայիս 16-ին, Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ պիւտձէտային հարցերու մշտական յանձնաժողովի նիստին քննարկուած է Կեդրոնական դրամատան գործունէութեան վերաբերեալ տարեկան հաղորդումը: Հիմնական գեկուցողն էր դրամատան նախագահի տեղակալ Յովհաննէս Խաչատրեանը:

«2021 թուականի Դեկտեմբերի դրութեամբ սղաճը կազմել է 7.4 տոկոս, միջին սղաճը՝ 7.2 տոկոս: Տարբեր արտաքին գործօնների պատճառով սղաճային վտանգները զսպելու նպատակով տարուայ ընթացքում վերաֆինանսաւորման տոկոսադրոյքը բարձրացուել է 4.25-7.75 տոկոսով: 2021 թուականի համար Կեդրոնական դրամատունը կանխատեսում էր 1.5 տոկոս տնտեսական աճ, իսկ սղաճի համար՝ 6.2 տոկոս: Միաժամանակ փոփոխուել են թէ տնտեսական աճի կանխատեսումները, թէ արտաքին հատուածից եկող սղաճային ճնշումներն են աւելացել: Արդիւնքում մենք ունեն-



ցանք 5.7 տոկոս տնտեսական աճ եւ 7.4 տոկոս գնաճ», նշեց դրամատան փոխնախագահը:

Անոր խօսքով՝ դրամավարկային քաղաքականութիւնը եղած է չէզոք կամ քիչ մը խթանող:

Ինչ կը վերաբերի 2022 թուականի սղաճի կանխատեսումներուն, ան ըսաւ, որ Կեդրոնական դրամատունը 2022-ի համար կը կանխատեսէ 6.5 տոկոս սղաճ եւ 1.5 տոկոս տնտեսական աճ, ինչ որ պայմանաւորուած է արտաքին միջավայրով:

# ԼՈՒՐԵՐ

## ՀԱՊԿ Գագաթածողովի Աւարտին Կայացած Է Փաշինեանի Ու Փութինի Առանձնագրոյցը

Հայաստանի ղեկավարը Քրեմլինի մէջ առանձնագրոյց ունեցած է Ռուսիոյ նախագահին հետ՝ երկրորդ անգամ վերջին մէկ ամսուայ ընթացքին: Հանդիպումը տեղի ունեցած է ՀԱՊԿ յոբելեանական գագաթածողովէն յետոյ:

Դռնփակ գրոյցէն առաջ Փաշինեան ընդգծած է, որ մտադիր է քննարկել տարածաշրջանային անվտանգութիւնն ու դարաբաղեան խնդիրը, նշած է, թէ որոշ տեղեկութիւն ունի յայտնելու Քրեմլինի ղեկավարին. «Յոյս ունեմ, որ այսօր կը քննարկենք նաեւ տարածաշրջանային անվտանգութեան, կայունութեան, Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման, ինչպէս նշեցինք մեր համատեղ յայտարարութեան մէջ, նաեւ ԵԱՀԿ Մինսքի խումբի կարեւոր դերակատարման հետ կապուած հարցեր: Կը ցանկանայիք Ձեզ հետ կիսուել որոշակի տեղեկատուութեամբ: Այնպէս որ, ես մէկ անգամ շնորհակալ եմ հանդիպման համար»:

Թէ ինչին կը վերաբերի նոր տեղեկութիւնը, չստակ է:

Յստակ է, որ կողմերուն միջեւ անցեալ հանդիպման ընթացքին ընդունուած համատեղ յայտարարութեան 30 կէտերէն մէկը եւս կը վերաբերէր Մինսքի խումբին. «Կողմերը ընդգծած են հրատապ մարզասիրական խնդիրներու արագ լուծման եւ արցախեան հիմնախնդիրի քաղաքական ու դիւանագիտական ճանապարհով կարգաւորման անհրաժեշտութիւնը: Այս ծիրին մէջ նշուած է ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան ներուժի եւ փորձի օգտագործման կարեւորութիւնը՝ համաձայն անոր միջազգային մասնաթիւն»:

Մինչդեռ Պաքուն 44-օրեայ պատերազմէն յետոյ մինչեւ օրս կը յայտարարէ, որ միջնորդական այդ խումբը այլեւս ընելիք չունի, քանի որ հակամարտութիւնը մնացած է անցեալին մէջ: Բանակցային գործընթացը աւելի բարդացած էր Ուքրանիոյ մէջ

սկսած պատերազմէն յետոյ: Մոսկուան ամիսներ առաջ յայտարարեց, որ միջնորդական այդ առաքելութիւնը այլեւս չի գործեր, քանի որ խումբի միւս համանախագահողները՝ Ֆրանսան եւ Միացյալ Նահանգները չեն փոփաքիր կապ ունենալ Ռուսիոյ հետ:

Չնայած այս տարաձայնութիւններուն, Հայաստանը կը պնդէ, որ դարաբաղեան հակամարտութեան վերջնական կարգաւորումը պէտք է շարունակել Մինսքի խումբի միջնորդութեամբ: Թէ ինչպէ՞ս, եւ կա՞ն արդեօք համագործակցութեան ազդակներ արեւմտեան գործընկերներէն, պաշտօնապէս չէ յայտարարուած:

Ռուսիոյ նախագահը այս առումով հարկ համարեց ընդգծել, որ Մոսկուան կը շարունակէ աշխուժօրէն զբաղիլ դարաբաղեան խնդիրով՝ եռակողմ ձեւաչափով, Հայաստանի ու Ատրպէյճանի հետ. «Մենք կը շարունակենք աշխուժօրէն աշխատիլ դարաբաղեան խնդիրի կարգաւորման ուղղութեամբ եռակողմ ձեւաչափով՝ Ատրպէյճանի գործընկերներուն հետ միասին»:

Քրեմլինի մէջ կայացած հանդիպման ընթացքին վլատիմիր Փութինը եւ Նիկոլ Փաշինեանը խօսեցան նաեւ տնտեսական կապերէն, ամենաուշագրաւը թեւեւ ֆաշինեանի յայտարարութիւնն էր ռուսական ներդրումներուն մասին. «Տնտեսութեան առումով ցանկանում եմ նկատել, որ Մարտ ամսին որոշակի անկումից յետոյ նկատուած է երկկողմ տնտեսական կապերի աշխուժացում: Մենք տեսնում ենք ներդրումային հետաքրքրութիւն ռուսական առեւտուրի կողմից, որն ուզում է ներդրումներ կատարել Հայաստանում: Եւ գիտեմ, որ այս հարցում Դուք եւս քաջալերում էք ռուսաստանցի գործարարներին, որպէսզի նրանք ներդրումներ կատարեն Հայաստանում: Ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել Ձեզ դրա համար»:

## Տեղի Ունեցաւ Հայաստանի, Ռուսիոյ Եւ Ատրպէյճանի Արտաքին Գործերու Նախարարներուն Հանդիպումը

Մոսկուան շահագրգռուած է, որ Հարաւային Կովկասը վերածուի խաղաղութեան, կայուն զարգացման եւ բարգաւաճման գօտիի, այս մասին ռուսական աղբիւրներու փոխանցմամբ՝ Տուշանպէի մէջ յայտնած է Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Սերգէյ Լաւրովը, Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարներուն մասնակցութեամբ եռակողմ հանդիպման ընթացքին:

Ատրպէյճանի արտաքին գործերու նախարար Ճէյհուն Պայրամովը, իր հերթին, նշած է, որ հանդիպումը «լու հնարաւորութիւն է՝ քննարկելու յառաջընթացը, որուն հնարաւոր է հասնիլ»: Ան միեւնոյն ժամանակ ամփոսանք յայտնած է, որ «տակալին չեն յաջողած յառաջընթացի հասնիլ ճանապարհային հաղորդակցութիւններու բացման ուղղուած աշխատանքներուն մէջ»:

Նախարար Արարատ Միրզոյեանը հանդիպման մեկնարկին շեշտած է, որ Հայաստանը եղած է եւ կը շարունակէ հաւատարիմ մնալ երեք երկիրներու ղեկավարներուն միջեւ բոլոր պայմանաւորուածութիւններու եւ յայտարարութիւններու իրականացման:

«Մենք պատրաստ ենք շարունակել բոլոր աշխատանքները ներկայիս ձեւաչափերի ուղղութեամբ. տարածաշրջանում տնտեսական ներկայութիւնների բացման եւ խաղաղութեան պայմանագրի կամ, ինչպէս երեւի աւելի ճիշդ է ասել, յարաբերութիւնների կարգաւորման համաձայնագրի, յարաբերութիւնների հաստատման ու մնացեալ բոլոր խնդիրների լուծման ուղղութեամբ, այդ թւում՝ մարդասիրական, ռազմագերիների ազատարձակման եւ այլ խնդիրների, որոնք մնում են չլուծուած», յայտնած է Հայաստանի դիւանագիտութեան ղեկավարը:

## Լաիտի Մէջ Կայացաւ Հայաստանի Եւ Հոլանտայի Վարչապետներուն Հանդիպումը



Հոլանտայի վարչապետ Մարք Ռութ եւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան հաղորդումի ընթացքին

Հոլանտա կատարած այցելութեան ծիրին մէջ, Լահէյի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Նիւ-Հոլանտայի վարչապետ Մարք Ռութի հանդիպումը:

Զրուցակիցները կարեւորած են երկու երկիրներու միջեւ տնտեսական յարաբերութիւններու զարգացումն ու ընդլայնումը, գործարար կապերու ընդլայնման ուղղութեամբ համապատասխան միջոցառումներու իրականացումը, անդրադարձած են ՀՀ-ԵՄ յարաբերութիւններուն, Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծուած իրավիճակին, միջազգային ասպարէզին մէջ տեղի ունեցող գործընթացներուն:

Այնուհետեւ երկու երկիրներու կառավարութիւններու ղեկավարները հանդէս եկած են յայտարարութիւններով:

Մարք Ռութն մասնաւորապէս նշած է. «Վարչապետ Փաշինեանի այցը շատ ճիշդ պահին տեղի կ'ունենայ, քանի որ Հայաստանի կառավարութիւնը անցեալ տարուայ ընտրութիւններէն յետոյ, շատ մեծ ծրագրեր ունի. շատ թեմաներ ունինք խօսելու, շատ մեծ ծրագրեր կան»:

«Հայաստանը մեծ ներդրումներ կատարած է եւ կ'երթայ ժողովրդավարութեան ճանապարհով, չնայած երբեմն կ'ըլլան բարդ իրավիճակներ եւ պայմաններ: Վարչապետ Փաշինեանի ղեկավարութեամբ թաւշեայ յեղափոխութենէն յետոյ շատ մեծ փոփոխութիւններ իրականացուած են, փտածութեան եւ շատ այլ խնդիրներու դէմ պայքար իրականացուած է: Ես մեծապէս համոզուած եմ, որ բարեփոխումները պիտի ըլլան շատ արդիւնաւէտ, եւ բոլոր հայերը անկէ օգուտ պիտի ստանան: Ես մեծ գնահատական կու տամ պարոն Փաշինեանին, շատ կը գնահատեմ իր կառավարութեան գործունէութիւնը եւ իրեն խոստացած եմ, որ պիտի օժանդակենք ամէն կերպ», հայկական կողմի պաշտօնական հաղորդագրութեան համաձայն՝ յայտարարած է Հոլանտայի վարչապետը:

Նիկոլ Փաշինեանը արձանագրած է, որ սա Հայաստանի ղեկավարի առաջին պաշտօնական այցն է Հոլանտա, ապա շարունակած է. «Ես այսօր մի քանի անգամ աւելի ունեցել եմ ասելու, որ փաստը, որ այս ժամանակում տեղի է ունենում այս պաշտօնական այցը, ես գնահատում եմ ոչ միայն մեր հարուստ պատմական յարաբերութիւնների եւ առեւտրատնտեսական բաւական զարգա-

ցած յարաբերութիւնների արտայայտութիւն, այլեւ Նիտերլանտների եւ անձամբ Ձեր, պարոն վարչապետ, աջակցութիւնը հայկական ժողովրդավարութեանը, մեր կառավարութեան որդեգրած ժողովրդավարական բարեփոխումների օրակարգին»:

«Մենք քննարկեցինք նաեւ այն հոլովոյթները, որ տեղի են ունենում Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններում, Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւններում: Եւ պէտք է ուրախութեամբ նշեմ, որ ըստ էութեան, արձանագրում ենք, որ մենք ընդհանուր պատկերացումներ ունենք այդ հոլովոյթների վերաբերեալ եւ ընդհանուր պատկերացում ունենք, որ խաղաղութեան օրակարգն իսկապէս պէտք է իրագործուի: Բայց նաեւ, մենք բոլորս գիտենք, որ առանց միջազգային հանրութեան աջակցութեան դա հնարաւոր չէ, եւ ուրախ ենք, որ միջազգային մեր գործընկերների շրջանում այդ օրակարգն ըմբռնում է գտնում», նշած է Հայաստանի վարչապետը:

Փաշինեանը եւ Ռութն պատասխանեցին են լրագրողներու հարցումներուն:

Վարչապետ Փաշինեան պաշտօնական այցի ծիրին մէջ Հաակայի մէջ այցելած է խաղաղութեան Պալատ: Այդտեղ վարչապետին դիմաւորած է Հաակայի Միջազգային իրաւունքի Ակադեմիայի խորհուրդի նախագահ եւ խաղաղութեան Պալատի «Քարնեկի» հիմնադրամի նախագահ Փիթ Հայն Տոնէրը:

Վարչապետը նախ շրջաց կատարած է խաղաղութեան Պալատին մէջ, այնուհետեւ վերջինիս բախին մէջ մասնակցած է հայկական խաչքարի բացման արարողութեան:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան հանդիպում ունեցած է Նիտերլանտներու Ծերակոյտի նախագահ Եան Անթոնի Պրաունի եւ Ներկայացուցիչներու Պալատի նախագահ Վերա Պերկեամփի հետ: Ատրպէյճանը կը շարունակէ յարձակողական քաղաքականութիւն վարել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Այս մասին ըսած է վարչապետ Փաշինեանը Հոլանտայի Միջազգային Յարաբերութիւններու հիմնարկին մէջ «Հայաստանը եւ Նիտերլանտները. Դարաւոր Բարեկամութիւն» թեմայով դասախօսութեան ընթացքին՝ պատասխանելով ներկաներէն մեկուկու հարցումին:

Պաքուն Ու Երեւանը Պատրաստ են Նոր Ծանապարհային Քարտեզի, Այլ Ոչ Թէ Լիարժէք Խաղաղ Համաձայնագրի

Պաքուն ու Երեւանը կը բանակցին քանի մը ձեւաչափերով: Վերլուծաբաններն ու լրագրողները կը քննարկեն հայ-ատրպէյ-ճանական խաղաղ գործընթացն ու անոր ապագան:

Մայիս 12-ին Տուշանպէի մէջ կայացաւ Հայաստանի, Ռուսիոյ ու Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարներուն հանդիպումը, ուր քննարկուեցան 2020-2021 թուականներու եռակողմ յայտարարութիւններու կատարման ընթացքը, կը տեղեկացնէ Հայաստանի Արտաքին Գործերու նախարարութիւնը: Ըստ Հայաստանի դիւանագիտական գերատեսչութեան՝ հանդիպման ընթացքին «մտքեր են փոխանակուել տարածաշրջանային հաղորդակցութիւններին եւ տնտեսական կապերի ապաշրջափակման, սահմանազատման, սահմանային անվտանգութեան հարցերով յանձնաժողովի ստեղծման եւ Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւնների կարգաւորման պայմանագրի վերաբերեալ»:

Ռուսիոյ հովանաւորութեամբ բանակցային այս գործընթացը կ'ընթանայ Մոսկուայի կողմէ Ուքրանիոյ դէմ սանձազերծած արիւնալի պատերազմին եւ Արեւմուտքի հետ Ռուսիոյ հակադրութեան պայմաններու մէջ: Ուաշինկթընն ու Պրիւքսլը եւս ներգրավուած են Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացներու մէջ: Յիշեցնենք, որ վերջերս Պրիւքսլի մէջ Եւրոպական Միութեան խորհուրդի նախագահ Շարլ Միշելը մասնակցութեամբ կայացած էր Հայաստանի ու Ատրպէյճանի ղեկավարներուն գագաթաժողովը: Բացի այդ, Տուշանպէ կատարած այցն առաջ ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը հայ-ատրպէյճանական գործընթացը քննարկած է Ուաշինկթընի մէջ ԱՄՆ պետական քարտուղար Էնթոնի Պլինքընի հետ, իսկ Մայիս 11-ին ԱՄՆ պետական քարտուղարը հայ-ատրպէյճանական բանակցութիւններու ընթացքին անդրադարձած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ իր հեռախօսազրոյցին ընթացքին, ու վերահաստատած է Ուաշինկթընի պատրաստակամութիւնը աջակցելու, այդ շարքին ԵԱՀԿ Մինսքի խմբակի համաձայնագրի ղերով, կողմերուն միջեւ տեսական խաղաղութեան հաստատման:

«The Washington Post»-ի սիւնակագիրը, ամերիկահայ Տէյվիտ Իկնեշիուսը «Հայաստանի եւ անոր պատմական հակառակորդներ՝ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ միջեւ» յարաբերութիւնները կարգաւորելու այս օրերու խաղաղ գործընթացը կ'որակէ «անհաւանական»: Զարմանալին այն է, որ այս գործընթացին իրենց աջակցութիւնը կը ցուցաբերեն թէ՛ ԱՄՆ-ն, եւ թէ՛ Ռուսիոյ Դաշնութիւնը, կը շեշտէ Իկնեշիուսը:

«The Washington Post»-ի հրատարակած իր յօդուածին մէջ սիւնակագիրը կը գրէ, որ «աշխարհը կեղրոնացած է Ուքրանիոյ մէջ ընթացող բռնու մարտերուն վրայ, եւ կովկասի մէջ գիւճանագիտական խնդիրները

կրնան ընկալուել որպէս կողմնակի ներկայացում»: Անոր հետ մէկտեղ, ըստ Իկնեշիուսի, անլուծելի այս հակամարտութիւններու կարգաւորման գործընթացին աջակցումը ոչ միայն կարելու է այդ երկիրներուն համար, այլ նաեւ կը բխի Միացեալ Նահանգներու եւ Ռուսիոյ շահերէն՝ «ստեղծելով երկխօսութեան համար օգտակար խողովակներ»: Ան, սակայն, Ռուսիոյ նախագահ Փլեթինը կ'որակէ որպէս «անյուսալի միջնորդ», որ կը հետապնդէ իր սեփական շահը:

Ըստ Իկնեշիուսի՝ Հայաստանը դեռ չէ ապաքինած պատերազմէն յետոյ, որ հազարաւոր կեանքեր խլեց եւ մեծ վնասներ հասցուց երկրին: Ան կ'ընդգծէ, որ հարկադրուած խաղաղութեան Հայաստանի համար լաւագոյն պաշտպանութիւնն է ԱՄՆ-ի եւ Եւրոպայի մասնակցութիւնը բանակցային գործընթացին: Անոր համատեղ ջանքերու ուղիներէն մէկը պիտի ըլլար, ըստ սիւնակագիրին, Մինսքի խմբակի վերածնունդը, որուն աշխատանքները այսօր կը պոչթթէ Մոսկուան, կը նշէ ան՝ ինչեցնելով, որ «փոխարէնը, Եւրոպական Միութիւնը միացած է Ռուսիոյ Դաշնութեան որպէս բանակցութիւններու հովանաւոր»:

Քարնեկի հիմնադրամի վերլուծաբան Թոմաս Տէվալ կ'ընդգծէ, որ այսօր հայ-ատրպէյճանական հակամարտութիւնը ունի բոլորովին այլ դիւանագիտական ձեւաչափ: Մինսքի խմբակի ձեւաչափը մեռած է, սակայն կարելու է պահպանել անոր փաստաթղթային ժառանգականութիւնը, կը գտնէ ան:

«Կարելու է պաշտօնապէս չյայտարարել այս ձեւաչափի մահուան մասին, քանի որ Մինսքի խմբակը ունի որոշակի գործառնութիւն: Այն ունի համատեղ յայտարարութիւններու պատմութիւն, այդ շարքին երեք նախագահներու՝ ԱՄՆ-ի, Ռուսիոյ եւ Ֆրանսսայի: Այսպիսով, առկա է փաստաթուղթերու ժառանգականութիւն՝ կապուած Մինսքի խմբակին հետ, որ կարելու է չկորսնցնել», կը պնդէ Տէվալը:

Անոր կարծիքով, այսօր Ռուսիոյ ու Եւրոմիութեան հովանաւորութեամբ ձեւաչափերը կ'ընթանան գոլգոհաբեր, եւ Պրիւքսլի չի ձգտիր փոխարինել Մոսկուայի գործընթացը:

«Այն, ինչ կը տրամադրէ Եւրոմիութիւնը, քիչ մը այլ բան է: Այն նոր խաղացող է, որուն, կը կարծեմ, յատկապէս դրական կը վերաբերի ատրպէյճանական կողմը: Այն կապուած չէ անցեալի հետ: Անոնք ազնիւ միջնորդներ են, որոնք չունին տարածաշրջանին մէջ մեծ օրակարգ, ինչպէս օրինակ ռուսերը կամ Թուրքիան եւ Իրանը», կը պնդէ Տէվալը:

Ըստ վերլուծաբանին՝ հակամարտող կողմերը պատրաստ չեն այսօր լիարժէք խաղաղութեան համաձայնագրի, այլ պատրաստ են նոր ճանապարհային քարտեզի, որ կրնայ ուժի չկիրառման երաշխիք դառնալ: Այդ յատկապէս կարելու է Լեռնային Ղարաբաղի հայութեան համար, կ'ըսէ ան:

Հայաստանի Մէջ Թէ՛ Կառավարութիւնը, Թէ՛ Բնակչութիւնը Գրկարաց Կ'ընդունին Եկուորները. «Associated Press»



Հայաստանը տանեակ հազարաւոր ռուսեր ընդունած է, որոնք որոշած են լքել իրենց հայրենիքը՝ Ուքրանիա Ռուսիոյ ներխուժման եւ անոր յաջորդած պատժամիջոցներուն պատճառով:

Շատերը նոր ուղղութիւն ընտրելու պահուն երկար չեն մտածած՝ Հայաստանը Ռուսիոյ հետ ունի առանց վիզայի կարգ, Հայաստան կարելի է ձամբորդել նաեւ ռուսական անձնագրով:

Քիրա Քուզմենքօս տեղեկատուական արհեստագիտութիւններու ոլորտին մէջ աշխատող ընկերութիւն ունէր Մոսկուայի մէջ: «Associated Press»-ի հետ զրոյցին ան պատմած է, որ Ուքրանիոյ մէջ պատերազմի մեկնարկէն անմիջապէս յետոյ ամուսինին եւ մանկահասակ դստեր հետ որոշած է լքել Ռուսաստանը: Կ'ըսէ, որ նախ համաձայն չէր կառավարութեան քաղաքականութեան, բացի այդ՝ բազմամիջոցներու եւ ռուսական դրամատնային համակարգի մեկուսացման պատճառով: Երեւան տեղափոխուած են 7 գործընկերներու ընտանիքներուն հետ, միասին վարձակալած են 400 քմ տարածքով առանձնատուն՝ Երեւանի ոչ-աղմկոտ հատուածներէն մէկուն մէջ, որ կը բնակին եւ կ'աշխատին:

«Ռուսիոյ մէջ գտնուելը իսկապէս դժուարացած էր՝ ելլելով Փետրուար 24-էն յետոյ ստեղծուած իրավիճակէն, պատճառները շատ են՝ բարոյականը առաջին տեղն է: Միև կողմէ, առեւտուրը իրօք սկսաւ տուժել», կը ինչէ Քուզմենքօս:

Հայաստան տեղափոխուած ռուսերէն շատերուն կարծիքով՝ երկրին մէջ առեւտուրով զբաղելը գրեթէ նոյնքան հեշտ է, որքան երկիր մուտք գործելը: Քուզմենքօս կ'առանձնացնէ հարկային թեթեւ բեռը:

Ռուսիան լքած ձեռնարկատէրերուն զգալի մասը տեղեկատուական արհեստագիտութիւններու ոլորտի մասնագէտներ են: «Khagheri Antar» բջջային յաւելուածը, որ այժմ արձանագրուած է Հայաստանի մէջ, իր 14 աշխատա-

կիցները Հայաստան տեղափոխած է, եւս 40-ը հեռավար կ'աշխատին այլ երկիրներէ:

Հայաստան տեղափոխուելը «հարկադրուած որոշում» էր եւ «մարդոց աշխատատեղիներն ու աշխատավայրերը պահպանելու հնարաւորութիւն», կ'ըսէ ընկերութեան ձեւաւորման բաժնի ղեկավար Վիքթոր Մալինովսքին:

«Associated Press»-ը կը նշէ, որ Հայաստանի մէջ թէ՛ կառավարութիւնը, թէ՛ բնակչութիւնը շատ գրկարաց կ'ընդունին եկուորները: Տնտեսութեան նախարարութիւնը յատուկ «թէժ գիծ» բացած է Հայաստան տեղափոխուած ձեռներէցներուն օգնելու նպատակով՝ ինչպէս դրամատնային հաշիւ բացած, առեւտուր արձանագրած է:

«Հայաստանը զարմանալիօրէն շատ բարեկամ երկիր է, ժողովուրդը շատ բարի է, շատ հոգեհարազատ: Եւ իսկապէս, մենք յաջողած ենք ինչ-որ չափով հասարակութեան մաս դառնալ, քիչ թէ շատ ընտելանալ», պատմած է տեղեկատուական արհեստագիտութեան ոլորտի մէկ այլ ներկայացուցիչ Իկոր Վասիլեւը:

Հայաստանի Տնտեսութեան նախարարութեան տուեալներով՝ 2022 թուականի առաջին եռամսեակին երկիր մուտք գործած է մօտ 150 հազար Ռուսիոյ քաղաքացի: Թէ անոնցմէ քանի՞նք եկած են մնալու նպատակով, դժուար է ըսել, նախարարութեան գնահատմամբ՝ այդ թիւը մօտ 70 հազար է:

Պաշտօնական տուեալներով՝ միայն Մարտին Հայաստանի մէջ ռուսերու կողմէ արձխանագրուած է 520 ընկերութիւն:

Երկիրը յոյս ունի օգտագործել բարձր որակաւորում ունեցող գաղթականներու հոսքը: «Աշխարհում շատ քաղաքներ են մրցում տաղանդաւոր մարդկանց համար, եւ մենք կարծու ենք, որ նման մարդկանց ներհոսքը Հայաստան մեծապէս կը բարձրացնի Հայաստանի տնտեսութեան մրցունակութիւնը», «Associated Press»-ի հետ զրոյցին ընթացքին ըսած է Հայաստանի տնտեսութեան նախարար Վահան Քերոբեանը:

Անդրադառնալով Ուաշինկթընի ներգրավուածութեան՝ Տէվալ կը գտնէ, որ ԱՄՆ-ն այսօր կը փորձէ աջակցել այս աւելի չէզոք արեւմտեան խաղաղ գոր-

ծընթացին, որ, ըստ անոր, չի հակասեր Ռուսիոյ Դաշնութեան հիմնական նպատակներուն կամ 2020 թուական Նոյեմբերի գինադարձ յայտարարութեան:

# Խորհրդածութիւններ Քաղաքական Ներկայ Իրադրութեան Շուրջ



## ՓԱՆՈՍ ԹԻԹԻՉԵԱՆ

Ընթերցողներուն ուշադրութեան կը փափաքեմ յանձնել այս յօդուածին շարժառիթը:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու մայրաքաղաքին մէջ, Հայութեան զօրավիգ Քոնկրէսական խմբաւորումին նախաձեռնութեամբ Յեղասպանութեան ոգեկոչումի տարեկան պաշտօնական ձեռնարկին ընթացքին, Հայաստանի Դեսպանուհին, իր ելոյթին ետք, թիրախ դարձած էր արգահատելի արարքի մը, երկու հայագիր երիտասարդներու կողմէ: Արարքը, որ Երեւանի հրապարակներուն վրայ ցոյցեր կատարողներու պարագլուխներուն կողմէ հրահրուած եւ ներկայիս հայ քաղաքական որոշ շրջանակներու մօտ տիրող փողոցային ժամանակավրէյակ հոգեբանութեան մէկ դրսեւորումն էր, հեռու ազգային արժանապատուութեան տարրական գիտակցութեան, բարեբախտաբար պախարակելի նկատուեցաւ բոլոր լրջախոս կուսակցական շրջանակներուն կողմէ, գէթ այն գաղութին մէջ զոր մօտէն կը ճանչնանք: Արարքին լայն արձագանգ չգտնելուն եւ արարքի հեղինակներուն ապահովութեան ուժերու կողմէ խստագոյն հետապնդումի չենթարկուելուն իրողութիւնը, կը վերագրենք դեսպանուհիի վեհանձնութեան:

Դէպքը իր լայն պարունակին (context) մէջ դնելով, կ'ուզենք հայ հանրութեան նկատողութեան յանձնել հետեւեալ կէտերը:

ա) Հայաստանի դեսպանուհին, պարզապէս արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան պաշտօնէն մը է: Ան խորհրդարանին է մեր երկրին: Անոր հանդէպ ցուցաբերուած վերաբերումը համազօր է հայութեան հանդէպ ցուցաբերուած վերաբերումին: Եւ հարցը կապ չունի թէ ո՞վ է Հայաստանի գործադիր իշխանութեան ղեկավարը: Նաեւ, իր անհատական արժանիքներով եւ կրթութեամբ բարձր գնահատուած դեսպանուհին, որպէս իզական սեռէ ընտրուած անձնաւորութիւն, մեր պետութեան ժողովրդավարական ուղղուածութեան համար խորհրդանշական յաւելեալ արժէք կը ներկայացնէ:

բ) Այսօր հայ սփիւռքն ալ իր կարգին տազնապալի շրջան մը կը բոլորէ: Լիբանանահայ համայնքը, յատկապէս, երկրի ընկերային-տնտեսական տազնապալի ծանր պայմաններուն տակ, ազգային համայնքային մտահոգութիւններուն եւ առաջնահերթութեան

թիւններուն գիտակից քաղաքական հասուն եւ համախոս ղեկավարութեան մը բացակայութեան, լուրջ խնդիրներ կը դիմագրաւէ, ինչպէս ի յայտ եկաւ վերջին երեքփոխանական ընտրութիւններուն ընթացքին: Առաւել ըլլալով, ներքին պառակտումներ, ու տարակարծութիւններ, որոնք առհասարակ ծայր տուած են մեր գաղութահայ կեանքէն ներս, յառաջացուցած են արմատականացում մը ու վտանգաւոր պարագ մը: Հեղինակութեան եւ առաջնորդութեան զգալի պակաս մը: Մեծ մտահոգութիւն կայ սփիւռքահայ կեանքէն ներս, վերականգնակերպուելու եւ անդորրութիւնը վերահաստատելու: Հեռու Երեւանի ցոյցերէն եւ անիմաստ վէճերէն: Կայ մտահոգութիւն՝ հայ նոր սերունդին մօտ վառ պահելու ազգային արժանապատուութեան ու զոհաբերութեան ոգին:

Այսօր, կենսական նշանակութիւն ունի հայրենիքի համար ունենալ լաւ կազմակերպուած, իր ներուժը զօրաշարժի ենթարկած, միակամ ու նպատակասլաց սփիւռք մը, որ թօթափած է մանրուք հաշիւները ու փառատենչութիւնները:

գ) Վերջապէս, Հայաստանը այսօր կ'անցնի անկիւնադարձային հանգրուանէ մը, Հայ-Թուրք եւ Հայ-Ազերի բանակցութիւններու: Եւ այդ բանակցութիւնները որոնք նպատակ ունին, առանց նախապայմանի, բնականոն դարձնել խզուած փոխ-յարաբերութիւնները 1990-ական թուականներէն ստղին, անկասկած իրենց զօրեղ ազդեցութիւնը պիտի գործեն Հայաստանի ընդհանուր ապագային վրայ: Ուստի, հարկ է հոս, որոշ չափով անդրադառնալ, թէ ի՞նչ կը կատարուի այդ բանակցութիւններով: Ներկայ յօդուածի ծիրին մէջ կարելի չէ նոյնիսկ մասնակի պատկեր մը ուրուագծել: Ուստի պիտի փորձենք պարզել այնքան բան, որքան հնարաւոր է:

2009-ին փորձ մը եղաւ Անգարա-Երեւան բնականոն փոխ-յարաբերութիւնը վերահաստատելու: Երկու Protocol-ներ ալ պիտի ստորագրուէին: Սակայն Պաքուն եւ Թուրք ծայրայեղ ազգայնական կուսակցութիւնը ձախողութեան մատնեցին փոխադարձ համաձայնութեան այդ փորձը:

Ներկայ նախաձեռնութիւնը, սակայն, տարբեր պայմաններու տակ տեղի կ'ունենայ: Ազգայնական ոչ միայն Ղարաբաղեան եօթը շրջաններուն վերատիրացած է,

and two joint statements issued alongside Azerbaijan and Russia last year pledging to establish working groups on unblocking transport links between Armenia and Azerbaijan and delimiting their shared border.

The fifth point states that "the Armenian side is ready to start negotiations for the settlement of relations between Armenia and Azerbaijan and for the establishment of inter-state relations based on the United Nations Charter, the International Covenant on Civil and Political Rights,

and the Helsinki Final Act."

"These are the basic principles that have existed from the beginning. It is here that the nations' right to self-determination and other important rights and freedoms are enshrined," Marukyan said.

Finally, the sixth point reiterates Armenia's desire to conduct negotiations with Azerbaijan with mediation by the Minsk Group, a body formed by the Organization for Security and Co-operation in Europe in the 1990s to encourage the peaceful resolution of the conflict between Armenia and Azerbaijan.

## Mirzoyan Reaffirms Armenia's Position

Continued from page 1

also stressed the importance of a speedy settlement of the humanitarian issues resulting from the 44-day war, including the need for immediate repatriation of the Armenian prisoners of war.

The CIS Foreign Ministers reviewed the report on the 2021 program of multilevel consultations between the foreign ministries within the CIS, referred to the list of scien-

tific projects on the priorities of the basic research of the member states. The decision on granting the Silk Road International University of Tourism the status of a basic organization of the CIS member states in the field of tourism and other documents were agreed. A decision was made on the CIS Youth Capital international project, which aims to intensify the cooperation of the CIS member states to create conditions for the promotion of youth potential.

## U.S. Embassy Donates Five Virtual Reality Headsets to Pediatric Cancer and Blood Disorders Center of Armenia



YEREVAN -- The Office of Defense Cooperation of the U.S. Embassy has donated five Virtual Reality headsets for the Pediatric Cancer and Blood Disorders Center of Armenia.

These headsets are an innovative technology developed by a local Armenian startup company "10X Immersive, Inc."

The tests have registered extremely positive results in relieving pain during pediatric care, vaccina-

tion, immunization, anesthetics induction, blood transfusion, blood tests, and finger prick (for diabetics) procedures.

These VR sets have been shown to be 374 percent more effective than traditional entertainment content delivered to children during medical procedures.

The donation was funded by United States European Command's Humanitarian Assistance Program.

## California Budget Includes \$10 Million

Continued from page 1

get will need to be approved by the State Legislature and is anticipated to be signed into law in June 2022.

Senator Anthony Portantino has been a champion of the museum since its inception and has been collaborating with the Governor's office to educate state officials and colleagues on the historic significance of the project.

"I was very pleased, excited, and thankful to the Governor when his office informed me of the additional \$10 million proposal for the museum," stated Senator Anthony Portantino. "Governor Newsom understands how important the project is for the Armenian American community and State

of California. The Governor has always had a deep appreciation and respect for Armenian Americans in California and this proposed allocation reaffirms it with action."

The Armenian American Museum is a world class cultural and educational institution that is currently under construction in the museum campus at Glendale Central Park. The museum will offer a wide range of public programming through the Permanent Exhibition, Temporary Exhibitions, Auditorium, Learning Center, Demonstration Kitchen, Archives Center, and more. The museum celebrated its historic groundbreaking and commenced construction on the project in Summer 2021.

## Weapons Sold to Azerbaijan by CSTO

Continued from page 1

pected," Pashinyan recalled.

Pashinyan also recalled arms sales by CSTO member states to its rival Azerbaijan. "For a long time we expected a response to the sale of weapons by the CSTO member states to a country unfriendly to Armenia, which was eventually used against Armenia and against the Armenian people. And this is also a problem. To be honest, the reactions of the CSTO member states during the 44-day of war in Nagorno-Karabakh in 2020 Autumn were not very happy for the Republic of Armenia and the Armenian people in general," he said.

Pashinyan stressed the special

role of the Russian Federation and Russian President Vladimir Putin in stopping the war in Nagorno-Karabakh.

"I want to reiterate that Armenia continues to be committed to the trilateral statements of November 9, 2020, January 11 and November 26, 2021, signed by the leaders of Russia, Armenia and Azerbaijan," he said.

Overall, Pashinyan stated that Armenia, as a founding member of the CSTO, is committed to fulfilling its obligations and considers the Organization a key factor for stability and security in the Eurasian region and for the Republic of Armenia.

CSTO members are Armenia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Tajikistan and Russia

### Պրոֆ. Ռիչարտ Յովհաննեսյանի Գրքի Շնորհանդեսը



Սոյն թուի Ապրիլ 28-ին, երեկոյեան ժամը 7-ին, Իրանահայ Միութեան սրահում եւ միութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ Պրոֆ. Ռիչարտ Յովհաննեսյանի խմբագրութեամբ վերջերս հրատարակուած Armenian Communities of Persia/Iran: History, Trade, Culture գրքի շնորհանդէսը:

Սրահը ծալքէ ի ծալք լեցուն էր միութեանկաններով եւ այլ գրասէրներով, ովքեր հաւաքուել էին լսելու այս մեծ գիտնականին, որ պիտի խօսէր հատորի մասին ու ներկայացնէր իրանահայութեան պատմութիւնն ու դերակատարութիւնը իրանում:

Դեռ յայտագիրը չսկսած ներկաները խոսուել էին Պրոֆեսորի շուրջ՝ ապահովելու գրքի իրենց մակագրուած օրինակը: Գրքերի վաճառքն ու մակագրումը շարունակուեց յայտագրի աւարտից յետոյ:

Երեկոյի բացումը կատարեց Իրանահայ Միութեան վարչութեան նախագահ՝ Պրոֆ. Հրանդ Աւանեսյանը, որ հայերէնով եւ անգլերէնով ներկայացրեց Պրոֆ. Ռիչարտ Յովհաննեսյանի կեանքն ու գիտական գործունէութիւնը եւ բեմ հրաւիրեց Պրոֆեսորին:

Գեղեցիկ եւ սահուն հայերէնով եւ սահիկների ցուցադրութեամբ Յովհաննեսյանը նախ իր երախտագիտութեան խօսքը ուղղեց իր երկար տարիների գիտական գործընկեր եւ կողակից, նորօք հանգուցեալ Դոքտ. Վարդիթեր Կոնոյրգեան Յովհաննեսյանին, որի յիշատակին է նուիրուած հատորը, եւ շարունակեց սքանչելի յիշողութեամբ ներկայացնել Armenian Communities of Persia/Iran: History,

Trade, Culture գրքի բովանդակութիւնը՝ հետաքրքիր ակնարկութիւններով եւ մէջբերումներով: 670-էջանոց այս հատորը, 15-րդ եւ վերջինը հայկական համայնքներին նուիրուած եւ Ռիչարտ Յովհաննեսյանի խմբագրութեամբ լոյս տեսած հատորների, արգասիքն է երկու տարիների նրա աշխատանքի՝ հաւաքելու եւ խմբագրելու տարիներ առաջ իր ղեկավարած UCLA-ի Արդի Հայոց Պատմութեան բաժանմունքում կազմակերպած Ատրպատականի եւ Նոր Զուղայի հայ համայնքներին նուիրուած երկու գիտաժողովներին ներկայացուած մասնագիտական ուսումնասիրութիւնների: 23 գլուխներից բաղկացած այս հատորում գծագրուած է հայ եւ պարսիկ ժողովուրդների յարաբերութիւններն ու քաղաքական, առեւտրական եւ մշակութային առնչութիւնները հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը:

Իր ներկայացումը որպէս միջարար, նշելով ներկայութիւնը համահեղինակներ՝ Անի Շահինեանի ("The Armenian Communities of Salmast: At the Nexus of Adversity and Accomplishments") եւ դոքտ. Ռոզմաթի Յարութիւնեանի Քոհնի ("The Massacres of Armenians in Persian Azarbayjan, 1918: A Personal Narrative"), Պրոֆեսորը հրաւիրեց դոքտ. Ռուբինա Փիրումեանին՝ ներկայացնելու իր հեղինակած գլուխը՝ "Atpatakan as a Bastiion in the Armenian Liberation Movement": Փիրումեանը իր խօսքում կարեւորեց արեւմտահայութեան ազատագրական պայքարում

Շար.ը էջ 19

### Հոգ. Մեսրոպ Վրդ. Պարսամեան Արեւելեան Թեմի Նոր Առաջնորդ

Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի 120-րդ թեմական ժողովին պատգամաւորները՝ Թեմի առաջնորդ ընտրեցին Մեսրոպ Վարդ. Պարսամեանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի վաւերացումէն ետք ան կը դառնայ ԱՄՆ-ի Արեւելեան Թեմի 13-րդ առաջնորդը: Ծնած է 15 Մայիս, 1981ին, Երեւան: Աւարտած է Էջմիածնի Գէորգեան ձեմարանը: Յաճախած է Սթրագպուրկի եւ Տապլինի աստուածաբանական ճեմարանները: Ծառայած է Ժընեւի, Մարսէյի, Փարիզի եւ Նիւ Եորքի հայկական եկեղեցիներուն մէջ: 2019-2021ին վարած է Մայր Աթոռի ճեմարանի տեսչութիւնը եւ այլ պաշտօններ:

Նորընտիր առաջնորդ Մեսրոպ Վրդ. Պարսամեան կը խօսի



հինգ լեզուներ, Հայերէն, Անգլերէն, Ֆրանսերէն, Ռուսերէն եւ Իտալերէն:

### «Հայկական Առեւտրային» Ցուցահանդէս



2022թ Մայիսի 4-ից 11-ը «Ամերիկա-Հայաստան գործարար կամուրջ» խորագրի ներքոյ կայացաւ Հայ գործարարների պատուիրակութեան այցը Գալիֆորնիա՝ Լոս Անճելոս:

Այցը կազմակերպուել էր «Միջազգային գործարար կապերի աջակցման խորհուրդ»-ի, «Հայամերիկեան գործարար խորհուրդ»-ի կողմից եւ տեղի էր ունենում Լոս Անճելոսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան եւ Հիւսիսային Ամերիկայի Հայ Առաքելական Եկեղեցու Արեւմտեան Թեմի հովանու ներքոյ:

Այցի շրջանակներում գործարարների պատուիրակութիւնը Մայիսի 5-ին այցելեց Լոս Անճելոսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւն, որտեղ հանդիպեց Գլխաւոր հիւպատոսութեան անձնակազմի հետ: Գլխաւոր հիւպատոսութեան արտակարգ դեսպանորդ եւ լիազօր նախարար Ն. Սարոյեանը ողջունելով գործարարներին, կարեւորեց համայնման այցերը, որոնք կոչուած են խթանելու հայ-ամերիկեան գործարար կապերի զարգացումը, ԱՄՆ ներմուծող հայկական արտադրանքի ծաւալների մեծացմանը: Նգ Սարոյեանը պատասխանեց հիւրերի հարցերին, որոնք վերաբերում էին հայ-ամերիկեան տնտեսական յարաբերութիւններին:

Մայիս 6-ին Կլենտէյլի քաղաքապետարանի եւ Լոս Անճելոսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան կողմից կազմակերպուել էր հայ գործարարների պատուիրակութեան հանդիպումը Կլենտէյլի գործարար համայնքի, քաղաքապետարանի տնտեսական համագործակցութեան ղեկարտամեմտի հետ: Հանդիպմանը ելոյթներով հանդէս եկան Կլենտէյլի քաղաքապետ Ա. Քասախեանը, Գալիֆորնիայի սենատոր Է. Փորթանթիստոն, Լոս Անճելոսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան խորհրդական Վ. Պահլաւունին, Կլենտէյլի քաղաքային խորհրդի անդամներ Ա. Նաճարեանը եւ Դ. Բրոթմանը: Հանդիպմանը ներկայ էին նաեւ Կլենտէյլի քորէական եւ ֆիլիպինցի գործարար համայնքի ներկայացուցիչներ:

Մայիսի 8-ին Պրպանք քաղաքում՝ Հիւսիսային Ամերիկայի Հայ Առաքելական Եկեղեցու Արեւմտեան Թեմի առաջնորդարանի տարածքում բացուեց «Հայկական առեւտրային» ցուցահանդէսը: Ցուցահանդէսի բացմանը ողջունի ելոյթներով հանդէս եկան Հիւսիսային Ամերիկայի Հայ Առաքելական Եկեղեցու Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ արքեպիսկոպոս Հ. Տէրտէրեանը, Գլխաւոր հիւպատոսութեան արտակարգ դեսպանորդ եւ լիազօր նախարար Ն. Սարոյեանը, Կլենտէյլի քաղաքապետ Ա. Քաս-

սախեանը, «Միջազգային գործարար կապերի աջակցման խորհուրդ»-ի նախագահ Մ. Մանուկեանը, «Հայ-ամերիկեան գործարար խորհուրդ»-ի նախագահը: Ցուցահանդէսին ներկայացուած էին շուրջ 3 տասնեակ հայ արտադրողների ապրանքներ եւ ծառայութիւններ:

Մայիսի 9-ին Հիւսիսային Ամերիկայի Հայ Առաքելական Եկեղեցու Արեւմտեան Թեմի առաջնորդարանի՝ Սրբ. Ղեւոնդեանց եկեղեցու դահլիճում տեղի ունեցաւ «Ամերիկա-Հայաստան գործարար կամուրջ» խորագիրը կրող համաժողովը: Համաժողովին ելոյթներով հանդէս եկան Լոս Անճելոսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան խորհրդական Վ. Պահլաւունին, «Միջազգային գործարար կապերի աջակցման խորհուրդ»-ի նախագահ Մ. Մանուկեանը, «Հայ-ամերիկեան գործարար խորհուրդ»-ի նախագահ Ա. Ղազարեանը, ամերիկահայ հեղինակաւոր գործարարներ, մեքսիկա-ամերիկեան գործարար կառույցների ներկայացուցիչներ:

Մայիսի 11-ին տեղի ունեցաւ հայ գործարար պատուիրակութեան հանդիպումը Լոս Անճելոս մարզի առեւտրարդիւնաբերական պալատի նախագահ Մարիա Սալինասի եւ պալատի ղեկավար կազմի հետ: Հանդիպումը, որն ունէր աշխատանքային նախաճաշի ձեւաչափ, տեղի էր ունեցել Լոս Անճելոսի քաղաքային ակումբում: Հանդիպումը կազմակերպել էր Լոս Անճելոսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւնը: Հանդիպմանը իր աջակցութիւնը եւ հովանաւորութիւնն էր ցուցաբերել «Կորդոբա» կորպորացիայի կառավարող գործընկեր, «Հայաստան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Մարիա Մեհրանեանը, Հայ-ամերիկեան գործարար խորհուրդ»-ի նախագահ Ա. Ղազարեանը: Այնուհետեւ ներկայացուեց «Enterprise Armenia» կազմակերպութեան կողմից Հայաստանի ներդրումային գրաւչութեանը նուիրուած կարճ տեսահոլովակ, ինչպէս նաեւ ներկայացուեցին գործարար պատուիրակութեան կողմից ամերիկեան շուկայում ներկայացուցող արտադրանքը: Մասնակցների միջեւ տեղի ունեցաւ մտքերի փոխանակում:



# Եղիշէ Պատրիարք Տէրտէրեան Երուսաղէմի (1910-1990)

## Եղիվարդ Գրագետն ու Բանաստեղծը

ԴՈԿՏ. ԶԱԻԵՆ Ա. ՔՅՆՅ.  
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

### Գահակալութիւնը

Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի գահակալութիւնը յԱթոռ Երուսաղէմի Առաքելական Պատրիարքութեան տեղի կ'ունենար 1960 Օգոստոս 21-ին յատուկ ուխտառութեամբ ի ներկայութեան եպիսկոպոսական լրիւ զգեստաւորմամբ Հայկազուն Աբրահամեան, Սուրէն Քեմհանեան, Նորայր Պողարեան, Սերովբէ Մանուկեան, Հայրիկ Աւլանեան եւ Խորէն Բարոյեան վեց եպիսկոպոսներու:



Յանուն Ամենայն Հայոց Տ.Տ. Վազգէն Ա Կաթողիկոսին խօսք կ'առնէր լիազօր ներկայացուցիչ Հայկազուն Արքեպիսկոպոս ու կը ջանար դարմանել անցնող մի քանի տարիներու տագնապալից շրջանը: Իր երեսնամեայ գահակալութեամբ Եղիշէ Պատրիարք, Երուսաղէմի հայոց պատրիարքներէն ամենէն երկար գահակալը կ'ըլլար (1960-1990), որ յանկարծամահ կը վախճանէր Պատրիարքարանի իր բնակարանին մէջ 1990-ի Փետրուար 1-ին յետ կարճատեւ հիւանդութեան: Անկէ տասնամեակ մը առաջ բանաստեղծ «Եղիվարդ» Պատրիարքը ուղեղի կաթուածի հետեւանքով լուրջ գործողութեան ենթարկուած էր եւ լրիւ գտած իր առողջութիւնը:

### Հիմնական Ձեռնարկներ

Իր գահակալութեան երեսուն տարիներու ընթացքին Եղիշէ Պատրիարք յաջողութեամբ պսակեց հիմնական կարգ մը ձեռնարկներ որոնց պատկը եղաւ երեսուն միաբանակից հոգեւորականներու ձեռնադրութիւնը որոնք իրմէ կարգ ստացան: Ձեռնարկներու շարքին յայտնի դարձան նախ Ս. Յարութեան Տաճարի միջազգային վերանորոգութեան բարդ եւ ծախսալից գործը, որուն համար հրաւիրեց Ամենայն Հայոց Տ.Տ. Վազգէն Ա Կաթողիկոսը նախագահելու համագալին հանգանակութեան վեմ գործին: Ապա գլուխ հանեց Ալեք եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց վարժարանի եւ ընծայարանի նոր շէնքին կառուցումը, որուն պաշտօնական բացումին Երուսաղէմ իր երկրորդ այցելութիւնը շնորհեց Ամենայն Հայոց Հայրապետը ի ներկայութեան բարերար Տ. եւ Տիկին Ալեք եւ Մարի Մանուկեաններու:

Պատրիարքի առաջին տարիներուն ակնառու եղան նաեւ Յորդանանի մայրաքաղաք Ամմանի մէջ նորակառուց Ս. Թադէոս հայ եկեղեցին՝ բարերարութեամբ Տ. եւ Տիկին Հերի եւ Աղանի Թաղոսեաններու, ինչպէս նաեւ վանքէն ներս բացումը Եղուարդ եւ Հելլին Մարտիկեաններու անուան թանգարանին: Բացառիկ եղաւ միաբաններու 1980 թուականի հաւաքը որուն հրաւիրուած էին 44 հին եւ նոր հոգեւորականներ, բոլորն ալ շրջանաւարտներ ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի, ի գլուխ ունենալով Կ. Պոլսոյ Ամենապատիւ Շնորհք Պատրիարք Գալուստեանը:

### Անհարկի Խտորումներ

Եղիշէ Պատրիարքի գահակալութիւնը սակայն արձանագրեց նաեւ անբաղձալի, եւ երբեմն յախուռն ու ժխտական դրսեւորում-

ներ: Բնական պիտի ըլլար զանոնք իրեն վերագրել քանի ինքն էր միաբանութեան գլուխը: Անոնցմէ գլխաւոր թերութիւնը եղաւ իր երկարատեւ տեղապահի պաշտօնը եւ յաջորդ պատրիարքի ընտրութեան անպատեհ ձգձգումը առանց յարգելի պատճառի: Հակընդէմ հոսանք մը յառաջացաւ վանքէն ներս ջանալով զսպել տեղապահին աննախադէպ եւ անպատասխանատու արարքները:

Եղաւ նաեւ գայթակղալից դէպք մը երբ 1967-ին վանքէն անհետացան 28 ձեռագիր մատենաներ որոնք յանկարծ աճուրդի հանուեցան Լոնտոնի մէջ: Ազգն ամբողջ տեղեակ մնալով իրողութեան դատապարտեց գործի վրայ եղող գլխաւոր հոգեւորականները, յատկապէս Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանը, պահանջելով անմիջական վերադարձը թանկարժէք մատենաներուն: Ամենայն Հայոց Տ.Տ. Վազգէն Ա Կաթողիկոսի խտտապահանջ միջնորդութեամբ, անոնցմէ 23 մատենաները, բոլորն ալ Աւետարաններ, փրկուեցան կորուստէ եւ փրկագինի հատուցմամբ վերադարձուեցան Ս. Յակոբեանց վանքի ձեռագրատունը:

### Պատրիարքի Ընտրութիւնը

Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի ընտրութիւնը իր անախորժ նախաբանը ունեցաւ, իր իսկ անպատասխանատու եւ քմահաճ պատճառներով: Արտասահմանի միաբանները վանք վերադարձան պատրիարքարանի դեկը եւ յապաղած ընտրութիւնը ձեռք առնելու, երբ Տէրտէրեան Արքեպիսկոպոս, ինչպէս յաճախ, բացակայ էր վանքէն անորոշ պատճառներով եւ ժամանակով:

Իր բացակայութեան երէց հոգեւորականներէն Տիրան Արքեպիսկոպոս Ներսոյեանի գլխաւորութեամբ Միաբանական ժողովներ գումարուեցան եւ գինք նախ Տեղապահ եւ ապա Պատրիարք ընտրեցին ու պաշտօններ ստանձնեցին, սակայն բոլորն ալ ժամանակաւոր եղան եւ խաբուսիկ՝ Տէրտէրեան Տեղապահ Սրբազանի Յորդանանեան կառավարութեան նեցուկովն ու միջամտութեամբը, անվաւեր նկատելով ամէն ինչ որպէս անընդունելի արարքներ:

Դժբախտ եւ տգեղ դէպքերը ի վերջոյ յանգեցան Տեղապահ Եղիշէ Տէրտէրեան Արքեպիսկոպոսի Հայոց Վանք վերադարձին եւ ընդդիմադիր տարրերու գլխաւորներէն երկրէն պետութեան կողմէ բռնի եւ նենգութեամբ արտաքսումին: Տէրտէրեան երկար բացակայութենէ ետք պետութեան նեցուկով վանք վերադարձաւ 1960 թուի Յունիսի

եւ աճապարանօք միաբաններու մեծամասնութեան ձայնով վերահաստատեց իր Տեղապահի դիրքը, միշտ պետական միջամտութեամբ, ու ապա ընտրուեցաւ Պատրիարք Առաքելական Աթոռին Յունիսի

եղաւ Հայրապետին իր շարք մը կարեւոր ու պաշտօնական Հայրապետական այցելութեանց ընկերանալով, ինչպէս Վատիկան, Ռուսիոյ Պատրիարքութիւն, Հնդկաստանի Մալապար Եկեղեցւոյ Կաթողիկո-



16-ին: Ընտրութեան յաջորդեց պետական ֆերմանի ստացումը եւ պաշտօնական գահակալութիւնը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերցուց իր վրայէն կախակայման արգելքը եւ շնորհեց իր Հայրապետական վաւերացումը:

սութիւն, եւ Եթովպիոյ Պատրիարքութիւն, ուր Ատիս Ապեպայի մէջ Հայէջ Սեւասէ Կայարը յատուկ եկեղեցական ժողովի հրաւիրած էր դաւանակից արեւելեան եկեղեցիներու հովուապետները: Եղիշէ Պատրիարքին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին յաճախակի այցելութիւններով վերահաստատուեցաւ իր հաւատարմութիւնը որուն համար ալ գնահատուեցաւ Հայրապետին:

Տարբեր եղաւ սակայն իր յարաբերութիւնը Կ. Պոլսոյ Հայոց

Շար.ը էջ 19



## DETERMINED & COMPASSIONATE CRIMINAL DEFENSE

- JUVENILE DEFENSE ◦ DOMESTIC VIOLENCE
- ASSAULT & BATTERY CHARGES
- DRIVING UNDER THE INFLUENCE (DUI)
- VEHICULAR OFFENSES/HIT AND RUN
- IMMIGRATION - MOTION TO VACATE A PLEA
- ROBBERY AND THEFT OFFENSES
- ASSAULT WITH A DEADLY WEAPON
- CRIMES INVOLVING POLICE OFFICERS
- CRIMINAL THREATS ◦ WEAPON CHARGES
- DRUG OFFENSES ◦ SEX CRIMES
- THEFT CRIMES ◦ GANG CRIMES



ALICE TAVOUKJIAN  
Attorney At Law

At the law office of ALICE TAVOUKJIAN, we provide zealous representation to achieve the best possible outcome on your behalf.

## LAW OFFICES OF ALICE TAVOUKJIAN, PC

www.TAVOUKJIANLAW.com CALL FOR A FREE CONSULTATION  
135 E. Valley Bl, #B, Alhambra, CA 91801 626.386.8606

# «Վահան Թէքեան. Յօդուածներ ժողովածու» Եռահատորի Առաջին Գրքի Շնորհանդէսը



Օրերս Երեւանի «Թէքեան կենտրոն»-ում տեղի ունեցաւ բանասիրական գիտութիւնների թեկնածու, դոցենտ Նունէ Մկրտչեանը: Նա, բարձր գնահատելով Վ. Գալստեանի կատարած աշխատանքը, մասնաւոր ուշադրութիւն դարձրեց առաջաբանին՝ «Հազարներու մէջէն մէկը» վերնագրով, Ծանօթագրութիւններին՝ մանրակրկիտ աշխատուած, Անձնանունների եւ Տեղանունների ցանկին՝ կազմուած գիտական բարձր մակարդակով, ինչը միաժամանակ երեւան էր հանում կազմողի հարուստ գիտելիքները ինդրոյ առարկայ նիւթի վերաբերեալ: Ըստ բանախօսի, գիրքը հարուստ նիւթ կհաղորդի ընթերցողին՝ հասկանալու ժամանակաշրջանն ու միջավայրը:

Ուշագրաւ էր բանախօս ԵՊՀ դասախօս, բանասիրական գիտութիւնների թեկնածու Նարինէ Մարկոսեանի ելոյթը: Բարձր գնահատելով հեղինակի աշխատանքը՝ նա կարեւորեց յօդուածների բազմաթեմայնութիւնը՝ գրականութիւն, քաղաքականութիւն, կրօն, մշակութիւն, որբահաւաքութիւն, կրթութիւն, լրագրութիւն, գրատպութիւն եւ այլն, որոնք կարող են տալ ուսումնասիրութեան անսպառ նիւթ:

Բանախօս Երեւանի Հիւսիսային համալսարանի Բանասիրութեան եւ մանկավարժութեան



չել, սակայն Սփիւռքում նա վաղուց է գնահատուած ու սիրուած: Լինելով արեւմտահայ վերջին եւ սփիւռքահայ առաջին պոետը՝ նա միաժամանակ ծաւալել է հասարակական մեծ գործունէութիւն: Ժողովածուում ընդգրկուած յօդուածների շնորհիւ ընթերցողն առաւել մանրամասն կձանօթանայ կարողագոյն հրապարակագրի ազգային, մշակութային եւ հասարակական գործունէութեանը: Ապա տպաւորիչ ելոյթով հանդէս եկաւ գրքի հեղինակը՝ ներկայացնելով հանձարեղ գրողի հրապարակագրութեան առանձնապատկութիւնները: Գրքի վերաբերեալ ծաւալուն եւ ուշագրաւ վերլուծութեամբ հանդէս եկաւ Մանուկ Աբեղեանի անուն գրականութեան ինստիտու-

ֆակուլտետի դեկան Մէրի Ալազ-եանն էլ իր խօսքում նկատեց, որ Վ. Թէքեանի յօդուածները ճանաչողութեան լայն հնարաւորութիւն են տալիս. ընթերցողը կարող է անսպառ նիւթ հաւաքել մշակութային, քաղաքական, հոգեւոր հայ եւ օտար գործիչների վերաբերեալ՝ ծանօթանալով նրանց կեանքի եւ գործունէութեան մանրամասներին, որոնց վերաբերեալ հանրամատչելի տեղեկութիւնները այլ աղբիւրներում կա՛մ քիչ են, կա՛մ բացակայում են: Ծնորհանդէսի զեղարուեստական մասում հնչեցին կոմիտասի անգլագական մշակումները Չուխաճեանի Գրիգոր Գուլիսանջեանի հրաշալի կատարմամբ: Անկրկնելի ելոյթով հանդէս եկաւ ասմունքող Աիդա Ասատուրեանը, որը ներկայացրեց հատուած-

# Հայկական Խաչքար մը Կանգնեցուեցաւ Լաիէի Մէջ



Վարչապետ Նիկոլ Փաշինեանը Հոլանտայի Թագաւորութիւն կատարած պաշտօնական այցելութեան ծիրէն ներս Լահէի մէջ այցելեց Խաչքարեան պալատ: Այստեղ վարչապետը դիմաւորեց Լահէի Միջազգային իրաւունքի ակադեմիոյ խորհուրդի նախագահ եւ Խաչքարեան պալատի «Քարնեկի» հիմնադրամի նախագահ Փիթ Հայն Տոնէրը:

Վարչապետը նախ շրջեցաւ Խաչքարեան պալատէն ներս, այնուհետեւ վերջինիս բակին մէջ մասնակցեցաւ հայկական խաչքարի բացման արարողութեան: Վարչապետ Փաշինեանը իր խօսքին մէջ մասնաւորապէս նշեց. «Քարնեկի» հիմնադրամի յարգելի՛ նախագահ, կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել ձեզի, որ այսօր, այս գեղեցիկ առաւօտը մեզի հետ կ'անցնէք խաղաղութեան եւ արդարութեան պալատի տարածքէն ներս՝ Խաչքարեան տաճարին մէջ, ինչպէս ըսած է Անտրու Քարնեկին աւելի քան 100 տարի առաջ, եւ ուր կը գտնուի Արդարադատութեան միջազգային դատարանին նման կարեւոր միջազգային հաստատութիւն մը:

Ինծի համար մեծ պատիւ է ազգիս անունէն կատարել հայկական խաչքարին բացումը՝ որպէս նուէր Հայաստանի կողմէ: Մենք այսօր միասնաբար պատմութիւն կը կերտենք, քանի որ հայկական խաչքար կը կանգնեցուի քաղաքի մը մէջ, որ յայտնի է որպէս միջազգային իրաւունքի եւ արդարութեան համաշխարհային մայրաքաղաք: Կան աւելի քան 50.000 խաչքարեր, որոնցմէ իւրաքանչիւրը ունի իր առանձնապատկութիւնը: Խաչքարերու խորհրդանիշն ու վարչապետութիւնը 2010 թուականին արձանագրուած է Եւրոնեւրոյի մարդկութեան ոչ նիւթական մշակութային ժառանգութեան ներկայացուցչական ցանկին մէջ: Խաչքարը հայ մշակութի գարգացման իւրօրինակ դրսեւորում է. ան հայկական ինքնութեան ամէնէն եզակի խորհրդանիշներէն է: Ունենալով աւելի քան հազարամեայ պատմութիւն՝ խաչքարը նաեւ ժամանակակից մշակութային երեւոյթ մըն է: Սիրելի՛ բարեկամներ, Հազարամեակներով Հայաստանը եւ հայերը ձգտած են խաղաղութեան՝ որպէս իրենց հայրենիքին մէջ ապրելու եւ արարելու ներ Վ. Թէքեանի յօդուածներին: Միջոցառումը յուզառատ էր, տպաւորիչ եւ ջերմ: Թէքեանասէր-



գերագոյն նպատակը: Այժմ մեր կառավարութիւնը իր կարելին կ'ընէ, որպէսզի խթանէ տարածաշրջանէն ներս խաղաղութեան օրակարգը՝ հակառակ այն գոյաբանական սպառնալիքներուն, զորս մինչեւ այսօր կը դիմագրաւէ ազգս: Այս խաչքարը կը խորհրդանշէ խաղաղութեան ու տոկունութեան հայկական ըմբռնումը եւ խաղաղութեան համար մշտական պայքարը՝ ըլլալ հայկական լեռնաշխարհի մէջ կամ այլուր: Խաչքարը հայ մշակութի գլուխգործոցն ու խորհրդանիշն է: Անոր հուշիւնը իր մէջ ունի խաղաղութեան պատգամ մը, որ փորագրուած է դարերու ընթացքին անձեռնմխելի մնացող քարին մէջ: Ահա, թէ ինչո՛ւ խաչքարը՝ որպէս նուէր ընտրուած է Խաչքարեան պալատին՝ խորհրդանշելու համար հայերուն այն սերունդները, որոնք իրենց ներդրումը ունեցած են աշխարհի մէջ խաղաղութեան հաստատման: Այս նուիրատուութեամբ Հայաստանը համարձակօրէն կը վերահաստատէ իր ամուր յանձնառութիւնը՝ իր ներդրումը շարունակելու խաղաղութեան գործին մէջ մեր տարածաշրջանէն ներս եւ ամբողջ աշխարհի մէջ: Լահէի Միջազգային իրաւունքի ակադեմիոյ խորհուրդի նախագահ եւ Խաչքարեան պալատի «Քարնեկի» հիմնադրամի նախագահ Փիթ Հայն Տոնէրը շնորհակալութիւն յայտնեց Խաչքարեան պալատին՝ հայկական խաչքար նուիրելու համար եւ վստահութիւն յայտնեց, որ ան իր ուրոյն տեղը ունենայ վերջինիս տարածքին մէջ: Ներքին խոստովանեցին, որ անհամբեր կապասն գրքի երկրորդ եւ երրորդ հատորների լոյսընծայմանը:





### «Լիվերփուլը» 8-րդ Անգամ Ըլլալով Նուաճեց Անգլիոյ Գաւաթը



«Լիվերփուլը» նուաճեց Անգլիոյ Գաւաթը՝ եզրափակիչ խաղին յաղթելով Լոնտոնի «Չելսիին»:

Լոնտոնի «Ուեսթհեմը» մարզադաշտին վրայ տեղի ունեցած հանդիպման հիմնական եւ լրացուցիչ ժամանակը աւարտեցաւ հաւասար՝ 0:0 արդիւնքով: Յետխաղային 11 մեթրանոցները աւելի յաջող կատարեցին «Լիվերփուլի» ֆուլթայրիստները՝ 6:5:

Այսպիսով «Լիվերփուլը» 8-րդ անգամ ըլլալով նուաճեց Անգլիոյ Գաւաթը՝ հաւասարուելով «Չելսիին», որ նոյնպէս 8 անգամ նուաճած է այս գաւաթը: «Չելսին» ու «Լիվերփուլը» հանդիպած էին նաեւ Անգլիոյ Լիգայի Գաւաթի աւարտական խաղին: Փետրուարին տեղի ունեցած հանդիպումը եւս աւարտած էր 0:0 արդիւնքով եւ 11 մեթրանոցներով յաղթած էր «Լիվերփուլը»՝ 11:10 արդիւնքով:

### «Մանչեսթըր Սիթին» Խուսափեց Պարտութենէն՝ 0:2-է Յետոյ

Անգլիոյ առաջնութեան նախափերձին հանգրուանին ախոյեան եւ առաջատար «Մանչեսթըր Սիթին» Լոնտոնի մէջ մրցեցաւ «Ուեստ Հեմի» հետ եւ բաւարարուեցաւ հաւասար արդիւնքով՝ 2:2:

Լոնտոնեան խումբը առաջ էր 2:0 արդիւնքով: Երկրորդ կիսախաղին «Մանչեսթըր Սիթի» կարողացաւ արդիւնքը հաւասարեցնել ու 90 կէտով շարունակեց գլխաւորել աղիւսակը եւ 4 կէտ առաջ է 1 հանդիպում նուազ խաղցած Լիվերփուլէն»:

### «Ինթերը» Յաղթեց Ախոյեանը Յայտնի Կը Դառնայ Վերջին Հանգրուանին

Իտալիոյ առաջնութեան 37-րդ հանգրուանին ախոյեան «Ինթերը» հիւրընկալուեց «Գալատարիին» եւ առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով: Իտալացի Սիմոնէ Ինձագիի գլխաւորած խումբին յաղթանակ ապահովեց իտալացի պաշտպան Մատէօ Տարմիանիի կողմէն արժանաւոր յարձակող Լաուտարօ Մարթինեսի երկու կոլերը:

«Ինթերը» 81 կէտով երկրորդն է եւ 2 կէտ ետ է առաջատար «Միլանէն»:

Մայիսի 22-ին կայանալիք վերջին հանգրուանին «Ինթերը» կ'ընդունի «Սամպորիային»: «Միլան» կը հիւրընկալուի «Սասուոլոյէն»:

### «Ռոման» Զյաղթեց Վերջին Դիրքի Վրայ Եղող Խումբին

Իտալիոյ առաջնութեան նախափերձին հանգրուանին «Ռոման» ընդունեց վերջին դիրքի վրայ գտնուող «Վենեցիային»: Փորթուկալցի Ժոզէ Մուրիլիանի գլխաւորած խումբը բաւարարուեցաւ հաւասար արդիւնքով՝ 1:1:

«Ռոմայի» կիսապաշտպան Հենրիխ Միխիթարեանը դեռ չի վերադարձած վնասուածքէն եւ յայտաւորուած չէր այս խաղին: «Ռոման» 60 կէտով կը գրաւէ աղիւսակի 6-րդ դիրքը:

### «Պարսելլոնան» Յաղթեց ու Դարձաւ Փոխ-ախոյեան

Սպանիոյ առաջնութեան նախափերձին հանգրուանին Մատրիտի «Աթլէթիքոն» սեփական դաշտին վրայ խաղաց «Սելտիայի» հետ եւ վերջին վայրկեաններուն կորսնցուց յաղթանակը: Արձանագրուեցաւ հաւասար՝ 1:1 արդիւնք: Երկու խումբերն ալ ապահովեցին իրենց տեղը լաւագոյն քառեակին մէջ եւ յաջորդ եղանակին մասնակցին Եւրոպայի Ախոյեաններու Լիգայի մրցաշարին:

73 կէտով երկրորդ տեղը գրաւեց «Պարսելլոնան», որ 0:0 արդիւնքով աւարտեց «Խետաֆէի» հետ դուրսը ունեցած խաղը: Չաւրի գլխաւորած խումբը նուաճեց փոխ-ախոյեանի տիտղոսը:

Ախոյեան Մատրիտի «Ռէալը» մրցաշարքը աւարտեց 85 կէտով:

### Սարգիս Ադամեան «Պրիւզի» Հետ Նուաճեց Պելճիքայի Ախոյեանութիւնը



«Պրիւզէն» 18-րդ անգամ եւ յաջորդական երրորդ տարին նուաճեց Պելճիքայի ախոյեանի տիտղոսը: Նախափերձին հանգրուանին «Պրիւզէն» հիւրընկալուեցաւ «Անթուրպէն» եւ յաղթանակ նուաճեց 3:1 արդիւնքով: Հիւրերու երրորդ կոլը նշանակեց Հայաստանի հաւաքականի յարձակող Սարգիս Ադամեանը: «Պրիւզէն» 49 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 6 կէտ առաջ է 1 հանդիպում նուազ ունեցած «Ռոյալ Եունիոնէն»:

### Ռոպերթ Լեւանտովսկին Կրկնեց Կերտ Միւլերի Մրցանիշը

Գերմանիոյ ախոյեան Միւլերի «Պայըրնի» 33-ամեայ լեհ յարձակող Ռոպերթ Լեւանտովսկին 7-րդ անգամ ըլլալով դարձաւ Պունտսլիգայի լաւագոյն ու մբարկու՝ կրկնելով «Պայըրնի» նախկին խաղացող Կերտ Միւլերի մրցանիշը: Գերմանիոյ աւարտած առաջնութեան ընթացքին Լեւանտովսկին դարձաւ 35 կոլի հեղինակ եւ յաջորդական 5-րդ անգամ ըլլալով արժանացաւ այս մրցանակին: Լեւանտովսկին «Պայըրնի» կազմէն ներս հանդէս կու գայ 2014 թուականէն ո վեր: Այս մրցաշրջանին ան բոլոր մրցաշարքերու ընթացքին մասնակցած է 46 խաղի, նշանակած՝ 50 կոլ, կատարած՝ 7 կոլային փոխանցում:



### Միապէ Յաջորդական Երրորդ Տարին Դարձաւ Ֆրանսայի Առաջնութեան Լաւագոյն Խաղացող

Փարիզեան ՊՍԺ-ի ֆրանսացի յարձակող Կիլիան Մեփապէն յաջորդական երրորդ տարին ըլլալով արժանացաւ Ֆրանսայի առաջնութեան լաւագոյն ֆուլթայրիստի մրցանակին, կը հաղորդէ Le Parisien թերթը: 23-ամեայ խաղացողը Ֆրանսայի այս առաջնութեան ընթացքին մասնակցած է 33 հանդիպման, նշանակած 24 կոլ, կատարած՝ 17 կոլային փոխանցում: ՊՍԺ-ն արդէն իսկ ապահոված է ախոյեանի տիտղոսը:



### ՈւԵՖԱ Աւելացրել Է Ազգային Ֆետերացիաներու Օգնութեան Գումարը

Վիենայի մէջ կայացած Եւրոպայի ֆուլթայրիստի ֆետերացիաներու Միութեան՝ ՈւԵՖԱ-ի 46-րդ համաժողովի ընթացքին որոշուած է 21 տոկոսով աւելցնել համերաշխութեան եւ զարգացման ծրագրերու գումարները: 2024-2028 թուականներուն այդ նպատակներով պիտի տրամադրուի 935 մլն Եւրօ: Այդպիսով, իւրաքանչիւր ազգային ֆետերացիա այդ չորս տարիներու ընթացքում պիտի ստանայ 17 մլն Եւրօ: ՈւԵՖԱ-ի յաջորդ համաժողովը տեղի կ'ունենայ 2023-ի Ապրիլ 5-ին, Լիպզոնի մէջ:



ՄԱՅԱԶԴ



ՃՈՐՃ ԳԻՈՐԳ ԱՅՆԹԱՊԼԵԱՆ  
Ծննդալ Դամասկոս, Փետրուար 25, 1957

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ հօր, եղբօր, եւ հարազատին՝ ՃՈՐՃ ԳԻՈՐԳ ԱՅՆԹԱՊԼԵԱՆ-ի մահը որ պատահեցաւ Մայիս 9, 2022ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, Մայիս 25, 2022ին, կէսօրուան ժամը 12:00ին Ս. Ղեւոնդեանց Մայր տաճարին մէջ, (St. Leon Cathedral Church, 3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504). Եւ ապա թաղման արարողութիւնը պիտի կատարուի Կլենտէյլի Forest Lawn Glendale, 1712 S. Glendale Ave., Glendale, CA 91205 գերեզմանատան մէջ:

Սգակիրները՝

Դուստրը՝ Թամար Այնթապլեան  
Եղբայրը՝ Վազգէն Այնթապլեան եւ զաւակը  
Եղբայրը՝ Վրէժ Այնթապլեան եւ զաւակները  
Հօրեղբայրը՝ Դոկտ. եւ Տիկ. Յակոբ Այնթապլեան  
Հօրեղբայրը՝ Դոկտ. եւ Տիկ. Եղիա Այնթապլեան եւ զաւակունք  
Եւ համայն Այնթապլեան, Հացագործեան, Օհանեան, Փաշայեան,  
Կիւրիւլեան, Պահատուրեան, Պապլանեան, Զարիկեան, Հալչպեան,  
Հալլաճեան, Թորոսեան, Նահապետեան, Իրիքեան, Հիւսթըն (Huston),  
եւ Պետրոսեան (Petrossian) ընտանիքներն ու հարազատները:

Փոխան Ժողովպասակի, Գուլիգիան Բարեփայլական Դաստառութեան (Guiligian Benevolent Foundation, c/o 1854 Glenwood Road, Glendale, CA 91201.)

ՄԱՅԱԶԴ



ՅԱԿՈՒ ՆԵՐՍԷՍ ՊԷՋՃԵԱՆ  
(Ծննդալ՝ 12 Դեկտեմբեր 1944)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին՝ Յակոբ Պէջճեանի մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 29 Ապրիլ 2022ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 19 Մայիս 2022ին, առաւօտեան ժամը 10:30ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, 500 S. Central Ave., ապա թաղումը՝ Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝

Այրին՝ Թագուհի Պէջճեան  
Զաւակները՝  
Տէր եւ Տիկ. Մարիա եւ Պօղոս Մանանեան եւ դուստրը  
Տէր եւ Տիկ. Ներսէս եւ Քարօլ Պէջճեան եւ զաւակները  
Տիկ. Ազապի Աթիքեան եւ զաւակները  
Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Սիլվա Օտապաշեան եւ զաւակները  
Տէր եւ Տիկ. Կարպիս եւ Մէլօ Գօլանճեան  
Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Քնարիկ Գօլանճեան  
Այրի Տիկ. Անի Խաչատուրեան  
Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Անահիտ Գօլանճեան  
Եւ համայն Պէջճեան, Մանանեան, Զիլիֆեան, Գօլանճեան,  
Խաչատուրեան, Աթիքեան, Օտապաշեան եւ Գանթարճեան ընտանիքները,  
հարազատներն ու բարեկամները:

ՅԱԿՈՒ ՆԵՐՍԷՍ

ՅԱԿՈՒ ՆԵՐՍԷՍ ՊԷՋՃԵԱՆի մահուան տխուր առիթով մեր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Անուշավաճառ Սարգիսի եղբայրներուն Սարգիս եւ Վազգէն Գօլանճեաններուն:

«Մասիս»

ՅԱԿՈՒ ՆԵՐՍԷՍ

ՊԷՊՕ ՔԻԻՐՔՃԵԱՆի մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի Տիկնոջ, քրոջ Մատլէնին (Լիբանան) եւ ընտանեկան բոլոր պարագաներուն: Ընկ. Պէպօ Քիւրքճեան եղած է Լիբանանի Ս.Դ.Հ.Կ. «Աղասի» մասնաճիւղի եւ Հ.Մ.Մ.ի անդամ:  
Իսկ Լուս Անճելոսի մէջ եղած է Հ.Մ.Մ.ի վարչութեան անդամ, ուր բերած է իր նպաստը Հ.Մ.Մ.ի ֆութթօլի խումբին:  
Առ այդ \$200 կը նուիրէ «Մասիս»ին:

Պրոֆ. Ռիչարտ Յովհաննէսեանի

Շարունակուած էջ 1-էն

Ատրպատականի դերը նախ որպէս կամուրջ Ռուսահայաստանի եւ Արեւմտահայաստանի միջեւ, որպէս գէնքի փոխադրութեան ճամբայ եւ ժամանակաւոր կայան Երկիր անցնել փորձող քաղաքական գործիչներին ու Ֆիտայիներին համար, եւ այդ բոլորի արդիւնքում կրթական, մշակութային եւ քաղաքական զարգացում ապրող Ատրպատակի հայութիւնը, որ նրան բերեց մեծ նուիրումով մասնակցելու Հայ Ժողովրդի Ազատագրական Շարժման Սուրբ Գործին: Բաֆֆին գծել էր հայ ազատագրական

պայքարի ճամբան ու նախատեսել այն նշանակալի դերը որ Ատրպատականը պիտի ստանձներ այդ ճամբին: Ատրպատականի հայութիւնը իրականացրեց այդ նախատեսութիւնը:  
Պրոֆ. Ռիչարտ Յովհաննէսեանի յաւելեալ բացատրութիւնները իր յետոյ յայտագիրը աւարտուեց բուն ծափահարութիւններով եւ անհատական շնորհաւորանքներով: Ապա՝ ներկաները հրաւրուեցին օգտուելու սուրճի սեղանից, որ ամենայն հոգածութեամբ պատրաստել էր միութեան տիկնանց բաժանմունքը՝ Տիկ. Մառի Շաղգոյեանի ղեկավարութեամբ:

Եղիշէ Պատրիարք Տէրտէրեան

Շարունակուած էջ 1-էն

Շնորհք Պատրիարք Գալուստեանի նկատմամբ, որուն ոչ մէկ այցելութիւն տուաւ երեսուն տարիներու ընթացքին, ընդհակառակը ընդդիմադիր իր դիրքով վարկաբեկեց նոյնիսկ իր իսկ անձն ու անունը, սկսեալ Երուսաղէմի ձեռագիրներու գողութեան յայտնի գայթակղութենէն որուն պատասխանատուն ինք ըլլալով կ'ամբաստանէր Շնորհք Պատրիարքը անիրաւօրէն, պարագայ մը որ սուղ արժեք իր վրայ, քանի որ ազգն ու եկեղեցին միայն զինք լիովին կը դատապարտէին եւ ոչ այլ ոք:

կան Հաւաքին եւ այլ առիթով մըն ալ բացումը կատարելու նորաշէն Ընծայարանին՝ նախագահութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Հոն ի ներկայութեան Հայոց Հայրապետին երկու պատրիարքներու յարաբերութիւնը «եղբայրական» եղան, յատկապէս երբ 1982 թուի Միաբանական Հաւաքի աւարտին Եղիշէ Պատրիարք յանկարծ կը հիւանդանար ու լուրջ գործողութեան կ'ենթարկուէր Երուսաղէմի մէջ, եւ Շնորհք Պատրիարք եղբայրաբար կը յամենար Երուսաղէմ մնալ մինչեւ հիւանդանոցէն անոր վանք վերադարձն ու ողջագուրմամբ Կ. Պոլիս իր վերադարձը:

Գրական Վաստակը  
Եղիվարդ ծածկանունով Եղիշէ Պատրիարք Տէրտէրեան գրական հարուստ եւ վաւերական բանաստեղծի վաստակ կը թողու իր ետին

տեղծի վաստակ կը թողու իր ետին իր բնատուր ձիրքին որպէս արդիւնք: Նաեւ իր արձակ գրութեանց մէջ եւ «Սրոն» ամսագրի խմբագրականներով կը հանդիսանայ շատագովմն ու պաշտպանը Հայաստանեայց Եկեղեցւոյ: Գրական վաստակին մաս կը կազմեն «Մագդաղինէ մեղրամոմէ», «Սրտակաման գիշերներ», «Անծանօթը», «Ակեղղամա», «Հայաստանեայց Եկեղեցին երէկ եւ այսօր», «Նարեկը հայ գրականութեան մէջ», «Լեւոն վրայէն», «Օտարականը», եւ յետագային գրած իր այլ հատորները Սուրբգրական բովանդակութեամբ եւ ազգային ու եկեղեցական հիմնանիւթերով:  
Եղիշէ Պատրիարք, վանեցիցեղասպանութեան այն որբերէն որոնք Երուսաղէմ տարուեցան Դուրեան Եղիշէ մեծանուն Պատրիարքի օրով, պատմութեան կ'անցնի որպէս ջերմ պաշտպան Երուսաղէմի Հայոց Պատրիարքական Աթոռին, վաւերական բանաստեղծ, արձակագիր, բացառապէս ազգեցիկ ատենախօս եւ տոկուն անձնաւորութեան տէր հոգեւորական մը:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈԳԻ ՇԱՄԱՐ)  
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝  
ՇՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Հովանավորությամբ՝

Ս. Դ. Հ. Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան

135-Ամյակի Նուիրում՝

# ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԱԶԳԱԳԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ

ARMENIAN NATIONAL & ETHNOGRAPHIC SONGS

Sponsored by: S. D. H. P. Western American Committee

Dedicated to 135<sup>th</sup> Anniversary

With the participation of:

Մասնակցությամբ՝



ԱՌՆՈ ՄԿՐՏՉԵԱՆ  
**Arno Mkrtychyan**



ՅԱՐՈՒԹ ՅԱԿՈԲՅԱՆ  
**Harut Hagopyan**

The event will take place on  
Saturday, June 25, 2022,  
Starting from 7:00 p.m.  
At AEBU Center

Տեղի կ'ունենայ Շարաթ Յունիս 25, 2022-ին  
Երեկոյեան ժամը 7:00-էն սկսեալ  
Հ.Կ.Ս.-Ի շքեղ սրահէն ներս՝  
1060 N. ALLEN AVE., PASADENA, CA 91104  
Տեղերը ապահովելու համար՝ Հեռ. 626-429-2815

Մուտքի նուէր՝ \$75